5006

5006

ՏԵՍԱԿ ԱՂԹՈՒԱՐՔԻՆՑ ՀԱՅՈՑ
ԵՐԱՆԵԼՈՅ ԱՐՔԵՊԱՐԱՆԱՑՈՅՆ
ԱՄԱՐՏԵՐԻՆԵՑԻՆՔ ԱՌ ՏԵՐ
Ն ԱՌ ԽՍԱՅԱՑԱՐԱ ԲԱՐՈՅ
ՀԻՍՈՒՍԻՆ

ԵՐԱՆԵԼ 1852

28
S - 27

S. Ep. M. de Lazaroff
103

ՊԱՏՈՒԻՐԱՆԱԳԻՐ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՓԱՐԻԶՈՒ

առ ոչխատ եւ առ

հաշատացեալս իշխոյ վիճակին

Ի ՓԱՐԻԶ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՇԻԼԼԷՐԱՑ

1852

28
S-27

ՏԵԱՌՆ ԱՒԳՈՍՏԵԱՅ ՍԻՊՈՒՐ

ՓԱՐԻԶՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՊԱՏՈՒԻՐԱՆԱԳԻՐ

առ ոչխատ եւ առ

հաշատացեալս իշխոյ վիճակին

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՄԱՍ ԳՐԱԴԱՐԱՆ
Ս. ՕՍԻՆԻՆ Ա ՅՈՒ
ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՄԱՍ ԳՐԱԴԱՐԱՆ
ՍՈՒՆ Ս. ՕՍԻՆԻՆ Ա ՅՈՒ
ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՄԱՍ ԳՐԱԴԱՐԱՆ
ՍՈՒՆ Ս. ՕՍԻՆԻՆ Ա ՅՈՒ

ФУНДАМЕНТАЛЬНАЯ БИБЛИОТЕКА
ЛАЗАРЕВСКАГО ИНСТИТУТА
ВОСТОЧНЫХ ЯЗЫКОВ

Ի ՓԱՐԻԶ.

Ի ՏՊԱՐԱՆԻ ՇԻԼԼԷՐԱՑ

1852

73293 ահ

ԱՐ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
АЗГАЗ-Арм
Մ ՅԱՍՆԻԿՅ

1098 - 84

ՊԱՏՈՒԻՐԱՆԱԳԻՐ

ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՓԱՐԻԶՈՒ

Մ. ԴՈՄԻՆԻԿՈՍ ԱԻԳՈՍՏՈՍ ՍԻՊՈՒՐ, *ողորմութեամբն Աստուծոյ և Հնորհիւ առաքելական Աթոռոյն Արբեպիսկոպոս Փարիզ քաղաքի,*

Ա. Ուխտ և առ Հաւատացեալս մերոյ վիճակիս ողջոյն և օրհնութիւն ի Քրիստոս։

Ահա դարձեալ վերստին, Եղբարք, տես դարձեալ ձերս Դիտապետ, որ խանդակաթ է ի սէր ձեր՝ որպէս և զուք իսկ քաջ գիտէք, ոչ ինչ առնելով խտիր ընդ քաղաքական կարծեաց փոփոխմունս և ոչ ընդ ընկերական պայմանին ասոիճանս, և որ առ ի ձէնջ ևս սիրով սիրեցեալն է իբրև Հայր հոգւոց ձերոց։

Այլ զուք մանաւանդ զորս ի բազմապատիկ պատճառաց առաւելապէսն սիրեցաք ըստ օրինակին Քրիստոսի, բաղում անգամ անշուշտ հարցէք անձամբ ցանձինս եթէ խափանեա՞ց լուեցո՞յց արդեօք մինչև ի սպառ զձայն նորա որոտընդոստն այն չառաչ որ զդրդեաց զԵրոսէ։ Ո՞չ ևս այլ զայցէ արդեօք յարուարձանեայս յայսոսիկ՝ հրճուեցուցանել իրովն այցելութեամբ զա-

ռուեստանոցս մեր, և օրհնել զհիւանդս յաղբատին ինա-
կարանս մեր ։ Մի արդեօք փոփոխո՞ւմն ինչ զործեցաւ
և ի սրտի Ս.ռաքելոյն մերոյ և Հովուի ։ Չի՞ եղև զութ
սիրոյ նորա առ մեզ առ զործաւորքս և առ հասարակ առ
աղքատացս բազմութիւն, զորս տէր Քրիստոս՝ մեր և
նորին վարդապետ՝ այնքանեաւ սիրով սիրեաց ։ Իսկ եթէ
ի նորա սրտին չեղև ինչ ամենեին փոփոխութիւն, զի՞է
զի ոչ ես տեսանեմք մեք զնա. զի՞ է զի ոչ ես լսեմք զբար-
բառ նորա. մի թէ երկի՞ւղ ինչ ուստեք արդեւուցու
զնա, կամ թէ խոնարհն խորհո՞ւրդ ինչ արդեօք խա-
փան լինիցի նմա ։

Ս.րդարև, Եղբարք սիրելեաք, էր ինչ վայրկեան ժա-
մանակի յորում համարեալ կարծեցաք թէ ահա եկն
հնաս կործանումն այն չինուածոյ մարդկայինս ընկե-
ռութեան՝ զորմէ ի ձախողակն մեր զգացմունս զուշակ
առ ձեզ լինէաք ։ Այն հարուած, թէպէտ և քաջ կան-
խածանօթ (քանզի յետ այնչափ մոլեգնութեան և խի-
զախմանց զանազան կուսակցութեանց անհրաժեշտ
ինն էր բռնական ինչ վախճան ելից իրացն), այն հա-
րուած՝ ասեմ՝ ընդարմացոյց զամենեսեան առ հասարակ,
և խոր լռութիւն պատեաց զմեզ շուրջանակի ։ Հարկ
եղև և մեզ կալ և կապ ունել զբանն Ս.տուծոյ ի շըբ-
թունս մեր առ ժամանակ մի, զի մի՛ տացուք ինչ պատ-
ճառս մեկնաբանութեանց քաղաքայոյզն կրից ։ Սակայն
անդէն միտ եդեալ մերումս հաւատոյ և խելամուտ եղաք,
զի Ս.տուած որոյ խորհուրդքն դեր ի վերոյ դասանին

1098-84

գուշակութեանց մարդկեղէն իմաստութեան՝ գամենայն զպատահարս աշխարհիս ի լրումն իւրոց առաջարկութեանցն վարէ։

Եւ զի՞նչ արդեօք իցէ ասասանօր խորհուրդ տեսչութեանն Աստուծոյ։ Մի՛ ոք ընդ այս երկմտեսցի, Եղբարք. կամք եղեն Աստուծոյ պարգևել նախ Գաղղիոյ յետ բուռն վրդովմանց զանդորրութիւն ցանկալի, վախճան առնել հերձուածոց որ կեղեքէին զհայրենիս, և թումբս ընդդէմ դնել աշխարհակործան մոլորութեանցն ուղխից որ կործանումն անագին սպառնային մարդկայինս ընկերութեան ողջոյն՝ հիմն ի վեր տապալելով զյաւերժականն օրէնս որոց պաշտպան և ջատագով յարեալ մնք մերումն Պատուիրանագրով ընդդէմ մոլորութեանց ապականչաց արդարութեան, և յորս հաստատեալ կան և պատիւ մարդկեղէնս բնութեան, և ընտանեաց յապահովութիւն, և քաղաքաց բարեկարգութիւն, և քաղաքացեաց խաղաղութիւն, և ազգաց բարգաւաճանք, և քաղաքակիրթ հրահանգաց յառաջատութիւն՝ որ քրիստոսական կրօնիցս են ծնունդք։

Իսկ ապա յետ այնորիկ կամ եղև Աստուծոյ ուսուցանել մեզ, զի եթէ պետութեանց աշխարհս յեղափոխութիւնք մուտ գտանեն երբէք ի խորհուրդս տեսչութեան խնամոց իւրոց՝ իբրու ծայրայեղ ինչ գարմանք ընդդէմ սանձարձակ ազատութեան կամ թէ բռնաւորական իշխանութեան, սակայն չիք և չիք հնար ազգայ քրիստոնէից ղերծ և անբոյթ կալ յերևսաց քաղաքական վրդովմանց,

և հշմարիտ յառաջադիմութեամբ թեակոխել ի վայելս ամենայն ժամանակաւոր բարեբաստութեանց զորս Ա-ւետարանն սուրբ խոստանայ յաւելուածոյ պայմանաւ այնոցիկ որ խնդրիցեն նախ զարքայութիւնն Աստուծոյ և զարդարութիւն նորա (1), եթէ ոչ անբակտելի զօդիւ կապեսցեն զերկոսին զայսոսիկ զմեծամեծ և զաստուածադիր օրէնս, զԽաղաղութիւն ասեմ՝ որ մշանջենաւոր զօրութեանն է ծագումն՝ ի պաշտպանութիւն իրաւանց հասարակաց և առն իւրաքանչիւր ատէն յայսմ աշխարհիս, և զԱզատութիւն՝ զնշոյլ ճառագայթից երեսացն Աստուծոյ ցոլացեալ ի դէմս իւրոյ պատկերին՝ զի այնու կարողասցի մարդ զործել զբարիս։

Արդ այս միաբանութիւն լի օրհնութեամբն Աստուծոյ և յերջանկութիւն ժողովրդոց մեծապէս կարեւոր, յանդորրութեան մարդկեղէնս ընկերութեան կատարի և ի բարեկարգ տեսչութեան, ի խաղաղաւէտ հանդարտութեան կրից, և ոչ ի հրաբորբոք մրցմունս կուսակցութեանց։ Զոր օրինակ ի բնական աշխարհիս՝ նոյն և ի բարոյականին պատահէ. ոչ յաշխարհաւեր մրրկաց շնչման և ոչ յամպրոպացն զոռալ շառաչմամբ, այլ ի լռիկ հանդարտութեան տարերաց բողբոջեն սերմանք ի սիրտ երկրի, փթթին զարնայնի, աճեն բարձրանան, և ի դէպ ժամանակի ծաղկօք զարդարին և պտղովք ուռճանան։

Յամ պատեհ է և մեզ ի լռութեանս յայսմիկ և յանդորրութեան հայրենի աշխարհիս՝ համարձակաղոյնս տալ

ազատութիւն Ջանիցս մերոց ըստ ցանկութեան սրտի որդեկացդ։ Գեր ի վերոյ հախարելով՝ որպէս միշտն՝ ամենայն քաղաքականութեանց, որպէս և ի նախանումն Պատուիրանագրի մերում յայտ արարաք զիմաստս մեր յուսերորդի աւուր յունիսի անցելոյ ամին, ահա դամք դարձեալ առ ձեզ, սիրելեալ Եղբարք, նովին խնամով լցեալք, մխիթարել զձեզ և հրահանգել բանիւն որ հաւատացաւ մեզ ի Քրիստոսէ։ Քահանայապետ եմք մեծի այսր և հոյակապ Եկեղեցւոյ Փարիզացւոց քաղաքիս, և որպէս մի ի յաջորդաց Առաքելոցն սրբոց՝ առ որս ասաց Քրիստոս, « Գնացէք աշակերտեցէք զամենայն հեթանոսս ». թէպէտ և անարժանք նոցին իցեմք՝ ոչ վերջասցուք ի քարոզութենէ աստուածայնոցս բանից։

Եւ հարկ իսկ է յաւուր յայսմիկ քաղցրանալ ձեզ բանիցն որոց մեք սպասաւորս եմք և թարգման, եթէ չգտանիցին ընաւ ի ձեզ արք նմանեալք կշտամբելոցն երբեմն ի Փրկչէն մերմէ, արք որ ախորժիցեն դայթակղել ի լուր յոյժ իսկ չքնաղիցն վարդապետութեանց Աւետարանին սրբոյ. քանզի առաջի կայ մեզ հառել զմարդասիրութենէ, զեղբայրսիրութենէ, զներողամտութենէ, զքաղցրութենէ, զողորմածութենէ և զանձնանուէր զթասիրութենէ, որք առ հասարակ բանք են հրաշագեղք՝ միով այսու սրբազան լեզուին բառիւ արտայայտեալք որ է Սէրն։

Յիշիցէք արդեօք զի յառաջնումն անդ Պատուիրանագրի զոր ի հաստատութիւն վճռոց Փարիզեան ժողովոյն ընծայեցաք՝ դատապարտս արարաք մեք զմոլորութիւնսն տասալիչս արդարութեան, և վկայ երաշխաւոր կարդացեալ մերոցս բանից զամենայն որ ինչ սուրբ և պատկառելի յերկինս և յերկրի կայցէ՝ յայտ յանդիմանութեամբ ցուցաք զայնոսիկ յիրաւանց այսր առաքինութեան որ անկ իցեն սեպհականութեան ստացուածոց։ Ցուցաք անդանօր եթէ չէ հնար բառնալ զընչից սեպհականութիւն՝ առանց ապատապուռ ընչելոյ նովին հարուածով և զհետս անդամ արդարութեան։ Այս ուրեմն նուիրական իմն է և անմատոյց սեպհականութիւնն՝ և ի ծագմանիւրում եյարդասիս, և յաշխատութեան որով կերպարանի, և ի դրամագլուխսն որովք յառուն զայ։ Զայս տիեզերական ճշմարտութիւն, որ մի յանդրդուելի հիմանց է մարդկայինս ընկերութեան, միաձայն վկայութեամբ հաստատեն հասարակաց միտք, խմաստասիրաց կարծիք, և աստուածաշունչ գիրք, և մեք հղանեցաք զունայնութիւն կարծեաց յուրաստ կացելոցն ի սմանէ, կամ թէ զվարդասեռութեանց որ հակառակ սմին եղանիցեն։

Ոչ, զոնութիւն Տեառն, ոչ սին սոսկ անուն է արդարութեանն առաքինութիւն, թէպէտ և բիւր մեկնաբանութիւնս ստայօդս բարդիցեն զայնմանէ մարդկեղէն կրից յուղմունք, թէպէտ և մեծեղեռն յանցանօք լուծանիցեն զայն սմանք, և գիրաւունս անձանց չարաչար վարիցեն ի

վնաս ընկերին։ Արդարութիւն ցանց համարեսցի բոլորիցն բարոյական առաքինութեանց գերազանց (2), որ ըստ երանելւոյն Աստրոսայ բանից՝ ամենեցուն զիւրն տայ, օտարին իրաց պատկառ կայ, և զանձին օգտակարութեամբ զանց առնէ՝ զի առ ամենեսեան զհաւասարութիւն պահիցէ (3)։ Սա, որպէս և հրեշտակայինն վարդապետ ասէ, Արմատ է ամենայնի (4), հիմն ընկերական կարգաց, որով և նախկին պայման խաղաղութեան աշխարհի։ Տեսաք իսկ զի և առաջինքն իմաստասէրք զնոյն քարոզեն։ Արիստոտէլ սքանչելի քան զբնաւ առաքինութիւնս կոչէ զսա, քան զերեկորին լուսաւորն զեղեցիկ և քան զարուսեակն չքնաղագեղ (5)։ Եւ Կիկերոն ասէ, թէ քան յայլումն ամենայնի՝ յարդարութեան անդ փայլէ առաքինութեանն պայծառութիւն, և ի նմանէ, ի նորին գործադրութենէ արք բարիք զիւրեանցն առնուն անուանակոչութիւն՝ քան զամենայն անուն ցանկալի (6)։

Սակայն աւասիկ և այլ իմն առաքինութիւն որ չքնաղագոյն ևս է՝ հշդրտագոյն առաջի առնելովն դանեղականն կատարելութիւն. բեղնաւորագոյն ևս՝ զի մօտագոյնս մերձենայ ի մշանջենաբուղխ աղբիւրն կենաց. և արդարև աստուածային առաքինութիւն, զի ինքն իսկ բարութիւնն է Աստուծոյ հեղեալ ի վերուստ ի սիրտս աղգի մարդկան, և աղգեալ ի նոսա ի շնորհացն Քրիստոսի. այն է Սէրն, առանց որոյ ըստ անսուտ պատգամաց առաքելոյն՝ հաւատք և զիտութիւն և արդարութիւն

և գործք բարեաց և հոգևորական նահատակութիւնք ոչինչ են յաչս Աստուծոյ։ Թէպէտ և համօրէն ամենայն երկնատուր պարգևօք հոխացեալ իցեմ, թէպէտ և զերա-հրաշ գործովք առաքինութեան պայծառացեալ իցեմ, ասէ մեծն այն աշակերտ Քրիստոսի, եթէ սէր ոչ ունիցիմ՝ ոչինչ եմ յաչս Բարձրելոյն. քանզի ոչինչ է խաւիր այնուհետև ընդ իս և ընդ պղինձն որ հնչէ կամ ընդ ծնծղայս որ զօղանջեն։ Յաղագս այսորիկ, Եղբարք սիրեցեալք, և Փարիզեանն ժողով, իբրև ակնարկեաց և զատապարտ արար զմոլորութիւնսն քանզիչս հիմանց արդարութեան, փութայ հեպի ի Սիրոյն Ջատագովութիւն, զի սա է ամենայն առաքինութեանց մայր և գլխոյ. և առաւելագոյն ևս խնամով հոչակ հարկանէ զիրաւունս սորին այնու զի պնդագոյնս պատուիրէ զսա, քանզի յաւելեալ ի բանս իւր ասէ.

ՎՃԻՌ

Ընդդեմ մոլորութեանց որ կործանեն զհիմունս արդարութեան և սիրոյ.

« Բայց և այլ ևս մոլորութիւնք են որ զեղբայրսիրու-
« թեանն զօր թուլացուցանել կամ խղել նկրտին։ Եւ
« ազգիւր մոլորութեանցս խեղաթիւրն այն խմաստա-
« սիրութիւն է որ զանազան վարդապետութեամբք

« ուսուցանէ չարաչար՝ եթէ հիմն ամենայն պարտուց
« բարոյականաց շահն է և օգուտ անցնիւր անձին։
« Եւ ո՞վ ոք ոչ տեսանիցէ զի վարդապետութիւնք
« այդպիսիք ոչ միայն տկարացուցանեն զսէր ի սիրտս
« մարդկան, այլ և զհետս անդամ այսր լաւութեան եղծեալ
« ջնջեն ի նոցանէ։ Իսկ մեք որ ցանկամբս պահպանել և
« նորոգել ի սիրտս ամենեցուն զանվրէպ և զիսկական
« ծանօթութիւն սիրոյ, զատապարտ առնեմք զայս
« ամբարիշտ վարդապետութիւն, և մանաւանդ որչափ
« ինչ մոլորութիւնք անտի յառաջ գայցեն յանհնարին
« վտանգ եղբայրսիրութեան։

« Դարձեալ և յորդոր լինիմք առ աւագ երիցունս և
« առ ամենայն մատակարարս աստուածեղէն բանին՝
« ստէպ յուշ ածել հաւատացելոց զօրէնս զայս որով
« պատուիրեաց Աստուած ամենայն մարդոյ խնամ ունել
« ընկերին. պարդել հաստատել և զքրիստոսականն
« վարդապետութիւն որ հարկ առնէ մարդկան զիջանել
« իրերաց՝ հանդերձ վտանգաւ անձանց. հերքել զբանս
« այնոցիկ որ զքրիստոսական պատուէրս եղբայրսիրու-
« թեան իբրու անհնարինս ինչ ի բաց մերժեն, և կամ
« իբրև աւելորդ յամախութիւնս աստուածպաշտութեան
« խոտան համարին։ Եւ համառօտ, զամենայն ջան ի
« գործ արասցեն ի թիկունս հասանել եղբարց մերոց
« ըստ իւրաքանչիւր կարի յամենայն ի պէտս նոցա։
« Յայնժամ ապա և աւետարանականն պատուէր
« փառաւոր եղիցի յաչս ամենայն աշխարհի, յորժամ

« տեսցեն զաղբատն տառապեալ՝ զանարգեալն երբեմն
« ի հեթանոսաց՝ զի սէր և ձեռնտուութիւն ի մէնջ ընդունի
« հանդերձ այնու պատուով և մեծարանօք զոր առատա-
« ձեռնէ նմա յԵկեղեցւոջ ճշմարիտն սէր՝ քրիստոսեան
« պատուիրանին ծնունդ ։ »

Յայտ իսկ է ի գեղեցիկ և ի վսեմական բանից աստի ժողովոյն զի երկակի մարանչին մոլորութիւնք ընդդէմ քրիստոնէական սիրոյ. քանզի մերթ ամբաստան լինին զսիրոյ թէ աւելորդ իմն յանախութիւն աստուածպաշտութեան իցէ և ցնորք սրտի՝ անհնարին առ ի գործ ըստ նոցա կարծեացն. որով և զուն գործեն այլ իմն փոխանակ նորին հաստատել պատճառս գործոյ՝ զոր և ստուգագոյն կարծեն, իբրու առաւել իմն մարդկեղէնս ընութեան յարմարաւոր. մերթ ևս, յափշտակեալ առեալ զսիրոյն անուն, և զիմաստս նշանակութեան նորին ոչ իմացեալ և կամ ի բաց մերժեալ, այլանդակեն զայն և յանարգութիւն հատանեն. զի իմաստասիրական զիտից ամբարտաւան և անձնահաճ մտաց պատշաճեցուցանեն զայն ։ Միոմն յուրաստ կան նոքա ի սիրոյ՝ հայհոյելով զայն առաջի ժողովրդոց, և միւսոմն սէր ստապատիր ուսուցանեն մարդկան. առաջնումն խստացուցանեն զսիրտս նոցա, և երկրորդին յապականութիւն դարձուցանեն զնոսա ։

Ապա ուրեմն հարկ ի վերայ կայ անդրդուելի հաստատութեամբ ցուցանել թէ զինչ իցէ սէրն քրիստոնէական, որով կարող իցեմք և երկաքանչիւր կողմանցն ի դիմի

հարկանել՝ ըստ Փարիզեան ժողովոյն Հարցն տեսու-
թեան։ Եւ իբրև առաջի զնիցեմք և լուսաւորագոյնս
ցուցանիցեմք զվսեմական իմաստս սիրոյն, այնուհետև
զործ մի զիւրին եղիցի յանդիման առնել թէ յի՛նչ զէմս
հակառակ ընդդէմ կբրիցին նմա Բանաւորականին
իմաստասիրութեան վարկածք զանազանք, եթէ զառն
սոսկականի զբարս և զվնասս առնուցուն ի մէջ, և եթէ
տեսչութեան ազգաց և ազանց համարիցին զնոսին
պիտանիս։ Եւ արդ ասասցուք նախ առաջին թէ զի՛նչ
իցէ երկնայինս այս միանգամայն և երկրաւոր առաքի-
նութիւն, եթէ զինչ՝ ասեմ՝ Աէրն իցէ. և յետ այնորիկ
լուսով այսր ասասուածեղէն խորհրդոյ որ յաւետարանէ
անտի զայ՝ ի քնին ասցուք զվարդապետութիւնս
չմիաբանեսցս ընդ սիրոյ։

ԹԷ ՉԻՆՉ ԻՑԷ ՍԷՐՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

Ա.

Չի՞նչ արդեօք իցէ քրիստոնէականն սէր։ Աստուածնութիւն քան զմարդկայինս բնութիւն գերագոյն (թէպէտ և հաղորդակից Քրիստոսի եղելոցն զիւրագործ), որով սիրեմք զԱստուած ի վերն քան զամենայն ինչ, և զընկերս մեր իբրև զանձինս վասն Աստուծոյ՝ որ ազգիւրն է ամենայնի որ ինչ արժանի սիրոյ կայցէ ի մարդումս ի կենդանատիպ պատկերի նորին, ուստի և նա ինքն է այսր սիրոյ գերագոյն պատճառ (7)։

Եւ ո՞վ ոք չտեսանիցէ այժմէն զուղիս բարոյական մեծութեանց, վսեմական գործոց, աստուածահաճոյ գնացից, որ յորդահոս բղխմամբ ծաւալին յաղբերէ աստի յերկինս բացելոյ։

Եղո՛ւկ մեզ, Եղբարք սիրեցեալք. այնպէս իմն ընդելացեալ զանսիմք մեք անդատին ի մանկութենէ ընդ հոյակապ ճոխութիւնս քրիստոսական հաւատոց, որպէս և ընդ բնութեանն պերճութիւնս, զի հանապազ նկատեալ տեսանեմք զնոսին և ոչ զորովին սիրաք մեր սիրով և երախտագէտ ըղձիւք։ Այլ համարեսցուք առ վայր մի եթէ մեծամեծքն այնոքիկ վաղ ժամանակաց խմաստասէրք, որ այնքան ախորժանօք խորհրդագրած լինել թեակոխէին ամենայնի որ ի պատիւ մարդկայինս բնութեան բերիցի, համարեսցուք եթէ Պղատոն, Արիս-

տոտէ, Կիկերոն լսէին յանկարծ բարբառ այսպիսի, առնուցո՛ւք արդեօք ի միտ եթէ զիա՛րդ պակուցեալ աքանչացեալ մնային ի տեսիլ յայտնութեան այսպիսւոյ չքնաղ և բազմաբեղուն առաքինութեան, այսպիսւոյ աստուածակառոյց հիման քրիստոսական կրօնիցս։

Ապա ուրեմն սիրոյն առաքինութիւն ոչ միայն զի առ Աստուած անդր ձգի, այլ և այնու զի առ ընկերն ծաւալի՝ առաքինութիւն է զերբնական, յերկնից ի վերուստ ծագեալ, բայց և ի Քրիստոսէ պատուաստեալ ի յօժարական կիրս որով բերին մարդիկ ի սիրել զմիմեանս երրակի յորդորմամբք համաբուն իսկութեան, միօրինակ սերնդեան և նմանատիպ վախճանի։

Կամ թէ սոյն այս սէր է երկրաւոր, որ ի թեւս հաւատոյ ամբարձեալ մինչև ի գիրկս արարչին, և անդ զտեալ պայծառացեալ, և արդարև աստուածարեալ, զայ ի Ջանէ յերկիր՝ լի յորդեռանդն սրբութեամբ, և շուրջանակի ծաւալէ զիւրև զլրութիւն կենդանութեան և զանսպառ բարեաց առատութիւն, և զարուց ի զարս սփռեալ սերմանէ զյիշատակս իւրոյ բարերարութեանն ի փառս քրիստոնէութեան և ի մխիթարութիւն ազգի մարդկան։

Կամ թէ զարձեալ, Աստուած ինքնին, որպէս հուսկ ընդ հուսկ ճոխագոյնս պարգեսցուք, կամեցեալ խառնել զմեզ զամենեսեան սիրոյն շաղկապու յիւր անբաժանելին միութիւն, յանձն իւր առնու սիրողական հանդերձ այլովքն անճառական յորջորջմամբք և զ Ամէն անուն (8), և զկեցեալ զմարդկայինս ընութիւն՝ զի կարողացի

պիրել զմեզ իրրև զիւր նմանակիցս, ի բարձանց երկնից իջանել ի սիրոս մեր, որպէս զի յորդորագոյնս աբասցէ զմեզ զիրկընդխառն համբուրիւ ողջագուրել ընդ նմա զնամօրէն ազգ մարդկան անուն սիրովն իւրով, որպէս և կանխաձայն զուշակութեամբ ծանոյց նա Երեմիա ի ձեռն իւրոյ մարգարէին (՝) ։

Բ

Եւ ուստի՞ յայտ իցէ այս օտարոտի կարծեցեալ սահման քրիստոնէական Սիրոյ, որ թուի խոնարհել զԱստուած մինչև ի մարդն, և կամ զմարդ մինչև յԱստուած ամբառնալ, զմիոյն սէր ընդ միւսոյն իմն խառնելով։ Ինքն իսկ Որդին Աստուծոյ տայցէ առ այս պատասխանի։

Յողիան խոցոտեալ դասք Փարիսեցւոց յերեսաց զԹոյն զորովոյ զոր տարապայման սիրով՝ ըստ նոցա կարծեցեալն՝ ցուցանէր Քրիստոս առ ամենայն մարդիկ առ հասարակ, և մանաւանդ առ ամբոխն, առ ապքասն և տառապեալ բազմութիւն, ժողովեցան յաւուր միում ի ժողով՝ տեսանել թէ լինիցի՞ն ինչ դամպիւտ ի սէր նորա՝ ի նարին իսկ բանիցն գնա որպայով։ Մի ոմն ի նոցանէ, օրինացն վարդապետ, մատեաւ առ նա և ասէ. «Վարդապետ, ո՞ր պատուիրան է մեծ յօրէնս։» Պատասխանի ետ Յիսուս. «Սիրեսցես զտէր Աստուած «քո յամենայն սրտէ քումմէ, և յամենայն անձնէ քումմէ, «և յամենայն մտայ քոյ և յամենայն զօրութենէ քումմէ.

« այս է մեծն և առաջին պատուիրան . և երկրորդն « նման սմին . Սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո » յաղագս Աստուծոյ : « Յայս երկուս պատուիրանս « ամենայն օրէնք և մարգարէք կախեալ կան (10) . » որով և երկոքինս մի են :

Տեսանէ՞ք , սիրելիք , եթէ զի՛ա՛ր յայտ առնիցէ մեզ Քրիստոս զաստուածայինն տեսութիւն Սիրոյ , և թէ ո՛րպէս ի նորին իսկ բերանոյ ընկալաւ Եկեղեցի զմերս սահման օտարոտի կարծեցեալ , և այնքանեաւ զեղով պանծացեալ :

Ուստի և մեծս այս պատուիրան Սիրոյ ուղղեալ տնօրինէ զմերսն ընդ Աստուծոյ յարաբերութիւնս , և միանգամայն զմերսն ընդ ընկերին վարմունս . քանզի ամենայն յօժարութիւն կամաց յառաքինութիւնն կոյս , որպէս և սուրբն Թովմաս ասէ , ի սէրն առնու զդաղար :

Ապա ուրեմն առ Աստուած՝ որ սկիզբն է և վախճան էութեանս մերոյ և աղբիւր ամենայնի որ ինչ սիրելիս յարաբերածս կայցէ , առ Աստուած՝ որ կատարելութիւն է անհուն , և իմաստութիւն անսահման , զերազոյն բարի և երանութիւն յաւիտենական , առ Աստուած սէրն առաջին ,

Բայց և երկրորդն սէր , սէր ընկերին , նման է առաջնոյն , որպէս Որդին Աստուծոյ վկայեաց : Եւ ընդէ՞ր արդեօք : Վասն զի ըստ պատկերի արարչին ստեղծաւ մարդ , ասէ դարձեալ հրեշտակայինն վարդապետ , և ես յորժամ զընկերն սիրիցեմ՝ զԱստուած ի մարդն սիրեմ ,

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР

Այսպէս և մանուկ ի հօրէն իւրմէ բացական՝ զպաշտօն սիրոյն պատկերի նորին հարկանէ, և սէր պատկերին խառնեալ միաւորի ընդ սիրոյ ծնողին. քանզի զհայրն իսկ սիրէ նա ի պատկերի անդ։

Ասպա ուրեմն, ըստ արարչագրին պատուիրանի, Սիրոյն նպատակ Աստուած է և ընկերն անանձնատաբար. և զոր օրինակ անձամբ զանձինս խարեմք սիրել զեղբարս՝ եթէ զԱստուած չսիրիցեմք, չիք երկբայութիւն զի յորժամ կասիցիմք ի սիրելոյ զընկերն՝ դադարեմք և ի սիրելոյ զԱստուած։

Զնոյն այլովք բանիւք՝ այլ խորագոյն ևս իմացուածով և իւրովն սեպհական անհասկանալիութեամբ յայտ առնէ հրեշտակն այն ի մարմնի, մին ի բազմապայծառ Ջահից հրահանգիչն Եկեղեցւոյ, զորմէ ի վեր այսր յիշատակ արարաք։ Յուցանէ նա ըստ բանականին արուեստի կանոնաց՝ զի անհնար է մարդումս սիրել զընկերն իբրև զանձն՝ եթէ ոչ յԱստուած և վասն Աստուծոյ. այլ եկ զբովանդակն իսկ զայն իմաստասիրութիւն սիրոյ զչքնաղագեղն առեալ ածցուք այսր ի մէջ։

« Աստուած, ասէ վսեմախոհն վարդապետ, վերջին « պատճառ է սիրոյ ընկերին, քանզի որ ինչ սիրելի մեզ « կայցէ յընկերին՝ այն իսկ յԱստուած զտանի իբրև ի « բնիկն աղբեր, զի նա էակն է գերազոյն և կատարումն « էակի։ Յորմէ զհետ զայ յայտնապէս զի զորմ սիրոյն « Աստուծոյ նոյն իսկ է ըստ տեսակին որ ինչ և զորմ « սիրոյ ընկերին (11)։ »

Եւ ապա, միտ դիր աղաչեմ Եղբարք, զերկաքանչիւր զսէրն, զաստուածսիրութիւնն և զեղբայրսիրութիւն որ անբաժանելիք են արդեամբք՝ տրոհէ նա ի միմեանց մտաւորական անջատմամբ, զի ի համեմատութիւն ընդ միմեանս ձգիցէ, և աստուածաղդեցիկ իմն համարձակութեամբ նախապատիւ զսէր ընկերին համարի։

« Ըստ երկուս յեղանակս մարթիմք առնուլ զհամեմա-
« տութիւնս զայս, ասէ աստուածաբանիցն պարագլուխ։
« Նախ՝ յորժամ զմէն մի սէր առանձինն առնուցուք.
« և յայնժամ չիք երկբայութիւն զի սէրն Աստուծոյ
« արդիւնականագոյն է. քանզի վարձ փոխարինին վասն
« նորին ինքեան է, և հուսկ վերջին փոխարէն է վայելել
« յԱստուած՝ առ որ զիմէ աստուածսիրութեանն
« բերումն։ Ամին իրի իսկ և վարձք խոստացեալ են
« որոց սիրենն զԱստուած. « Եթէ որ զիս սիրեսցէ,
« ասէ Քրիստոս, և Հայրն իմ սիրեսցէ զնա, և ես
« երևեցուցից նմա զիս (12)։

« Երկրորդ անդամ, մարթի և յայլ դէմս ի համեմատու-
« թիւն բերել զերկաքանչիւր զսէրդ. իբր զի յաստուած-
« սիրութեան անդ Աստուած միայն է որ սիրի, իսկ
« յեղբայրսիրութեան ընկերն սիրի յաղագս Աստուծոյ.
« այնպէս զի սէր ընկերին յինքն բովանդակեալ ունի
« զսէրն Աստուծոյ, ուր սէրն Աստուծոյ զսէր ընկերին
« ոչ բովանդակէ։

« Մարթի ուրեմն, ասէ սուրբն Թովմաս, ի համե-
« մատութիւն արկանել զկատարեալ սէրն Աստուծոյ որ

« առ ընկերն ևս տարածեալ ձգի՝ ընդ անբաւական և
« անկատար սիրոյն որ առ Աստուած ևեթ բերիցի։
« Անբաւական ասեմ և անկատար, զի զայս պատուիրան
« ունիմք մեք յԱստուծոյ եթէ « Որ սիրէ զ Աստուած՝
« սիրէ նա և զեղբայր իւր. » և ահա յայս միտս նախա-
« պատիւ է սէր ընկերին (13)։ »

Գ.

Սիրոյ առաքեալն Յովհաննէս, սիրեցեալն աշակերտ Յիսուսի, անդատին ի սկզբանէ խօսիցն յայտ առնէ մեզ զսոյն զայս նախապատուութիւն, և ակն յանդիման ցուցանէ զանլուծանելին զօդ կապակցութեան սիրոյն Աստուծոյ և սիրոյ ընկերին, և թէ զիարդ խառնին միանան սոքա ի կատարումն սիրոյ։ Սակայն միանգամայն և զայս ուսուցանէ զի քան զամենայն ցոյցս սիրոյն Աստուծոյ վաւերականագոյն է սէր ընկերին։ Զուր է սայ յորդառատ և ակնավէիտ, որ ի բարձուէ անտի լերին ընթացեալ արբուցանէ զմարդաղետին առ հասարակ, և վկայէ բեղմնարարութեան և յստակութեան աղբերն իւրոյ։

« Սիրելիք, ասէ, սիրեսցուք զմիմեանս, զի սէր
« յԱստուծոյ է, և ամենայն որ սիրէ՝ յԱստուծոյ է
ծնեալ և ճանաչէ զ Աստուած (14), » քանզի յայտնագոյնս ինն յանձին ցուցանէ զբարութիւն նորա և զնախախնամութիւն և զքաղցրագութն ողորմութիւն։

« Եւ որ ոչն սիրէ՝ ոչ հանայէ զԱստուած [15] » զէթ արդեամբք գործոց իւրոց. այնուհետև յուրաստ կայ յորդւոյ անուանէն և դադարէ ի լինելոյն պատկեր։

Ասես զու սիրել զԱստուած, յաւելու առաքեալն. « այլ զԱստուած ուրուք երբէք չիք տեսեալ. » և զու ինքն տեսեր զնա երբէք յիւրումն էութեան։ Արդ զիա՞րդ ասիցես թէ սիրես զու արդարև զոր ինչ ոչն տեսանես, և յոր չհասանես երբէք՝ թէպէտ բիւրապատիկ ջանիւ մտացդ ձգտիցիս։ Եւ ահա զանտեսանելին զայն տեսանես զու մարմնոյդ իսկ աչօք յիւրումն պատկերի, և կարող ես սիրել զնա յեղբարս քո՝ աներկիւղ ի պատրանաց ցնորից։ « Եթէ սիրեսցուք զմիմեանս, ասէ « առաքեալն, Աստուած ի մեզ բնակէ, և (յայնժամ եթէ) « սէր նորա ի մեզ կատարեալ է [16]։ »

Եւ իբրև ի հաստատութիւն իւրոցն բանից ածէ ի վերայ. « Եթէ ոք ասիցէ եթէ սիրեմ զԱստուած, և « զեղբայր իւր ատիցէ, տուտ է։ » Ընդէ՞ր։ Նախ զի որպէս կանխաւ իսկ ասաց և դարձեալ կրկնէ, « Որ ոչ « սիրէ զեղբայր իւր զոր տեսանէ (զոր ըստ պատկերին « Աստուծոյ զիտէ արարեալ, զոր ձեռօքն շօշափէ, զոր « համաբուն հանայէ անձին, և նմին պայմանի և վիճակի « սահմանեալ, և ինքեան նմանատիպ, և անհամար « պիտոյից որպէս և ինքն՝ ներքոյ անկեալ, և ի կարիս « աղցաւոր կենցաղոյս զնա ինքեան և զանձն նմին « կարօտ), զԱստուած զոր ոչն ետես (զանմատոյցն

« զգայութեանց , զանտեսանելին ի մարմնաւոր աչաց)
« զիա՞րդ կարիցէ սիրել (17) ։ »

Եւ երկրորդ անգամ, զիա՞րդ պարծիցի ոք կամ թէ համարիցի սիրել զԱստուած՝ եթէ լուծանիցէ զպատուիրան նորա զմեծն և զբազմապատիկ քարոզութեամբ հոչակեալ . « Եւ զայս պատուէր ունիմք առ ի նմանէ , « ասէ առաքեալ , զի որ սիրէ զԱստուած՝ սիրէ նա և. « զեղբայր իւր (18) ։ Ամենայն որ սիրէ զծնօղն (զԱս- « տուած) ՝ սիրէ և զծնեալն ի նմանէ ։ Այսուիկ ճանաչեմք « եթէ սիրեմք զՈրդին (կամ զորդիսն) Աստուծոյ , « յորժամ զԱստուած սիրեսցուք և զպատուիրանս նորա « արասցուք . բանզի այս է սէրն Աստուծոյ՝ եթէ զպա- « տուիրանս նորա պահեսցուք (19) ։ »

Այսպա ուրեմն եթէ ոք ոչ սիրէ զեղբայր իւր , ոչ սիրէ զԱստուած, ասասցուք և մեք ընդ առաքելոյն սրբոյ և ընդ տեառն իսկ Յիսուսի . ոչ, չսիրես դու զԱստուած՝ եթէ արհամարհիցես զպատուիրանաւ նորին ։

Դ

Այս է աւասիկ իսկութիւն քրիստոսական վարդապետութեան յաղագս Սիրոյ ։ Սէր ընկերին խառն է ի նմա ընդ սիրոյն Աստուծոյ որ սկիզբն է նորին և վախճան . և այսպէս յօրինեալ կազմի յերկոցունցն մի միայն առաքինութիւն անբաժանելի , առաքինութիւն զերբնական և աստուածային , որ երևեցաւ երբեմն յաշխարհի յանձին

Տեառն Յիսուսի ընդ Սիրոյն յորջորջմամբ. « Աստուած սէր է։ »

Եւ յայնմ ժամանակէ հետէ ի սրտէ անտի նորին, ի սրտէ ասեմ Որդւոյն Աստուծոյ և Որդւոյն Մարիամու իբրև յերկնաբուղխ, յանսպառ և յանհուն աղբերէ զետա- հետեալ ընթանան շնորհք և սրբութիւն, սէր և զթութիւն, և արգասաբերս գործեն զոգիս մարդկան, և ի հիացումն աշխարհի կարգեալ հանդիսացուցանեն անդադար զդասս դասս նորածնեալ մարդկան զթասիրաց, և սիրոյն վեհագանց, զանազանեալ անուանակոչութեամբք առա- քելոց, մարտիրոսաց, հայրապետաց, երիցանց, կրօնա- ւորաց, քարոզչաց, կուսանաց, սրբուհեաց և արդարոց յամենայն կարգէ և յամենայն հասակէ, որոց հրեշտա- կատիպն կենցաղ՝ նմանեալ վարուցն Քրիստոսի՝ հա- նապազորդ պատարագ է ի փրկութիւն հոգւոց և ի զիւրութիւն մարմնոց եղբայրակցացն իւրեանց։

Եւ յետ այսր ամենայնի հանրական տեսութեանց զիւրին իմն է խելամուտ լինել եթէ չիք ինչ բնաւ յարա- բածական բնութեանս՝ այսմ զերազանց Սիրոյ զուգա- կան։ Զոր և մեծն յիմաստասէրս քրիստոնէից Փաւքաս՝ հանդերձ իւրովն ինքնուրոյն խորհրդածութեամբ այսպէս յանդիման առնէ.

« Մարմնոցն առ ի հոգւոց անջրպետութիւն օրինակէ « զանջրպետութիւնն բիւրապատիկ առաւելութեամբ « անհուն որ ընդ մէջ է հոգւոց և սիրոյ, զի զերբնական է « սա։

« Մարմինք ամենայն, հաստատութիւն և աստեղք,
« երկիր և որ ի սմա թագաւորութիւնք, ոչ արժեն և ոչ
« զփոքրիկն ի հոգիս. քանզի նա հանապէտ զայս ամենայն
« և զանձն ևս իւր, իսկ մարմինքն և ոչ մի ինչ։

« Ամենայն մարմինք համօրէն և ամենայն հոգիք
« միանգամայն հանդերձ ամենայն արդասեօք իւրեանց
« ոչ արժեն և ոչ զդուղնաքեայն ի չարժմունս սիրոյ,
« քանզի սէր անհնարին բարձրութեամբ զեր ի վերոյ
« գտանի ամենեցուն նոցա։

« Յամենայն մարմնոյ առ հասարակ ոչ է մարթ և ոչ
« խուն ինչ արտաբերել խորհուրդ. յանհնարիցն է այդ,
« և այլոյ կարգի արդասիք։ Ըստ նմին օրինակի և
« յամենայն մարմնոյ և ի հոգւոց առ հասարակ ոչ է
« մարթ արտաբերել չարժումն ինչ ճշմարիտ սիրոյ.
« յանհնարիցն է այս և զերբնական ևեթ կարգի գործ[20]։»

Սէրն ի սրտէ Որդւոյն Աստուծոյ մարդացելոյ միայն զայ. վասն որոյ միանգամայն աստուածային է և մարդկային. այլ զի յաստուածակոյս կողմանէ անտի ունի զծագումն, նմին իրի և յանբաւութիւն ձգտի։

Ե

Յորժամ սէրն Աստուծոյ զերբնական զայսօրինակ պատուաստիցի յընդաբոյսն ի մեղ աղդեցութիւն, փոփոխումն մեծ գործի ամենայն մարդկեղէն առաքինութեանց, որ թէպէտ պանծալիք իցեն երբէք ուրեք,

սակայն ցանդ անպտուղք դտանին, և նշոյլս այս հոգ-
ւոցն արեգական պտղաբերս առնէ զնոսին և զեղեցիկս,
և վարձուց անբաւից և յաւիտենականաց արժանաւորս։

Աղէ ածէք ի մէջ զո՛ր յառաքինութեանց անտի և
կամիցիք, և մեք ցուցցուք ձեզ անդէն վաղվաղակի զի և
այն մի է ի ծաղկանց աստուածատունկ ծառոյս այսորիկ՝
փթթեալ ի շունչ սիրոյն Քրիստոսի։

Երանելին Օգոստինոս ի հնդետասաներորդի հատածի
անդ հրաշալի մատենին որ Յաղագս սովորութեանց
կաթողիկէ եկեղեցւոյ (21), յայտնապէս ցուցանէ զի
բովանդակութիւն գործնական զիտութեան բարոյա-
կանին Սէրն է։ Եւ մեծն այն վարդապետ՝ քաջ ներկուռ
իմաստից քրիստոսական կրօնիցս՝ զսէրն Աստուծոյ
(յորմէ անբաժան համարի միշտ զսէր ընկերին) սկիզբն
ասէ և աւարտ ամենայն առաքինութեանց։ Քանզի են
իսկ նոքին առ հասարակ իբրու այլ հայլ բերմունք սիրոյ,
և շարժմունք սրտի առ Աստուած մասնականք՝ որպէս
առ զերազոյն բարի, առ կատարելութիւն ծայրագոյն,
առ իմաստութիւն զերակատար, առ խաղաղութիւն
ծայրայեղ, առ միութիւն զերաղանց։

Որոյ վասն կարող եմք ասել ըստ մեծի այնմ մեկնչի
Սիրոյն օրինաց, եթէ Խոհեմութիւն՝ որ առ հեթանոսս
խորամանկութիւն էր հարտար, և փառասիրութեան
հնարք, և արուեստ ամբառնալոյ զիւրոյ բաղդին չինուած
ի վերայ օտարին աւերակաց, յետ այսր կերպարանա-
փոխութեան անուանել մարթի Սէր՝ որ ընտրէ զբարին

ի չարէն անյապաղ և անքոյթ յեղանակաւ, և զառ Աստուած զնացիցն խնդրեալ զտանէ զաջողագոյն ճանապարհ սակս անձին և ընկերաց, զուն զործելով ի բաց բառնալ ի շաւղաց նոցին զխոչ և զխութ՝ որ են զթեցմունք և տառապանք կենցաղոյս։

Որոյ վասն հեթանոսացն Արդարութիւն, որ ցանգ իսկ անհնարին անիրաւութիւն էր առ ազգս մարդկան, զի յայր սոսկական հղհիմ էր և անկարեկիր, և յայր իշխանական անողոք և անսանձելի, սուսերս հանապաղ և խարոյկս և տանջանարանս ունելով շուրջանակի, առ Սիրոյն օրինօք սէր է Աստուծոյ իբրև աղբեր ամենայն կարդաց՝ որ ըստ յառաջադէմ ծաւալել աւետարանին ևս քան զևս ձգէ զմարդիկ ի պատկառել յիրաւանց իրերաց հաւասարութեան պայմանաւ, և ի վոխանակել զքաղցրութիւն հաւանողութեան ընդ տանջանացն խստութեան։

Վասն որոյ և Արիութիւնն այն սրտի, որ երբեմն սնոտի ևեթ պարծանք էր քաջութեան, որով էր զի սուսերամարտկացն մոլեգնութեամբ ի մահ անդր զիմէին մարդիկ ի զբօսանս ամբոխին, և էր զի ստոյիկեան իմն անախտութիւն ի ցաւս կերպարանեալ պարծէին՝ ի չնորհուկս իմաստասիրացն զոռոզութեան, այն արիութիւն որով լրումն յաղթանակի համարէին մարդիկ յաչս դնել զվտանգս և զամենայն խոչ խափանարար զի կարող լինիցին զիշխանսիրութեան կամ զփառաց կամ զհաճոյից իւրեանց կատարել զմոլութիւն, զարդիս առ քրիստո-

նեայս, և մանաւանդ առ մարտիրոսացն դասս՝ սէր է այն վսեմական որ ամենայնի համբերէ վասն Աստուծոյ և վասն ընկերին, ներէ մտադիր իւրոց թշնամեաց, և անդէն իսկ ի տանջանսն զոլով՝ զուարթ ակնարկէ ի դէմս դահճացն իւրոց։

Սոյնպէս և ժուժկալութիւն, որ արուեստ ևեթ էր երբեմն պահպանելոյ զանձին առողջութիւն առ ի յերկարագոյնս վայելելոյ ի հեշտալիս մարմնոյ՝ հանդերձ տուժիւք հոգւոյն արժանեաց, այժմ առ Քրիստոսի աշակերտեալսն, և մանաւանդ առ քահանայսն ողջամիտս և առ Քրիստոս ողորմածութեան, սէր է սուրբ և ողջախոհ մարմնով և մտօք, որ զերծ կայ մնայ յամենայն ապականութենէ՝ որպէս զի աղատագոյն և լուսաւորագոյն ևս նահատակեսցի ի ձգել զոգիս առ Աստուած, կամ ի սփոփել զվշտակիրն մարդկութիւն։

Զ

Միակս այս պատուիրան սիրոյ՝ հանդերձ կրկնակի նպատակաւն իւրով, որ է Աստուած և մարդն, աղբիւր է ամենայն բարոյական պարտուց և հիմն օրինաց առ հասարակ, ասէ սուրբն Թովմաս (22)։

Եւ ո՞վ ոք անդէտ իցէ Դոմատեայ հոյակապ հաւին, յորում քաջահմուտն այն իրաւագէտ՝ զերածայրեալ իմն իմաստասիրութեամբ, և պարզ և մեկին՝ միանգամայն և անժխտելի ապացուցիւք յայտ առնէ ևթէ ո՛րպէս ի

սիրոյն Աստուծոյ որ գերագոյն բարի և վերջին վախճան է մերոյս էութեան՝ բղխեալ եւանէ և սէր ընկերին, այս-ինքն է ամենայն արարածոյ որ մեզ իցէ բնաւորակից և ի նոյն կարգեալ երանութիւն. և թէ զիա՛րդ այնուհետև ի սիրոյ անտի Աստուծոյ և ընկերին, որ նախկին և կրկնակի օրէնն է մերոյս բնութեան, ամենայն օրէնք բնականք և քաղաքականք յառաջագային, յորս հաստատեալ կայ և մարդկայինս ընկերութիւն, և կրօնից կարգաւորութիւն, և պետութեանց բարեկարգութիւն, և առն իւրաքանչիւր պարտք և իրաւունք, և ընտանեաց պարտականութիւնք, և երդմանց անդրժութիւնք։ Եւ ահա ըստ քաջին այնմ իրաւագիտի մերում բարոյականն աշխարհ ողջոյն զայսու միակ կենդրոնիս շուրջ եկեալ ընթանայ, զՍիրոնն ասեմ։

Զնոյն և զերահռչակն Պաքոն ըստ նմին օրինակի կանխագոյն իսկ քան զԴոմատ իմացեալ ասէր (23). «Քրիստոսականս կրօն միով ևեթ գծագրութեամբ պատրաստէ զմարդիկ առ ամենայն առաքինութիւն, տպաւորեալ յոգիս նոցա զՍէրն՝ որ կարի ի դէպ զօդ կատարման (24) կոչեցաւ, զի արդարև իսկ այս առաքինութիւն յինքն ժողովեալ զօդէ զայլսն զամենեսին... Ցորժամ սիրտ ուրուք բորբոքեալ իցէ հրով ճշմարիտն Սիրոյ, չիք երկբայութիւն զի այնպիսին յայն աստիճան կատարելութեան գտանի յոր չկարէր ժաման լինել հանդերձ ամենայն խրատուք և սատարութեամբ բարոյականին իմաստասիրութեան...

« Մարդկեղէն լաւութիւնք առ հասարակ՝ աքանչելիք յաչս մեր, յաւելու Պաքոն, և որ յառաւելագոյն աղնութիւն զբնութիւնս մեր վերբերեն, խոտորմունս ունին ծայրայեղս. Սէրն միայն ազատ է յայնցանէ։ Հրեշտակք խանդացեալք ընդ զօրութիւն արարչին՝ յանցեան և անկան. « Ելից, ասէ սատանայ, և եղէց նմանող Բարձրելոյն (25)։ » Ցանկացաւ և մարդն հաւասարել զիտութեանն Աստուծոյ, և անկաւ. « Լինիջիք իբրև զաստուածս ճանաչել զբարի և զչար (26)։ » Բայց յորժամ ցանկացան ժաման լինել ի բարութիւն ինչ զուգական բարութեան կամ Սիրոյն Աստուծոյ, ոչ բնաւ վտանգեցան ոչ հրեշտակն և ոչ մարդ, և ոչ վտանգեսցին երբէք։ Այլ և հրաւիրեաւ իսկ կոչեցաք մեք նմանող լինել այսմ անսահման սիրոյ. « Սիրեցէք զթշնամիս ձեր. բարի արարէք ատելեաց ձերոց, և աղօթս արարէք ի վերայ այնոցիկ որ լլկենն զձեզ և հալածեն, զի եղիջիք որդիք Հօր ձերոյ որ յերկինս է. զի զարեգակն իւր ծագէ ի վերայ չարաց և բարեաց, և ածէ անձրև ի վերայ արդարոց և մեղաւորաց (27)։ »

Լուարուք արդ և զոր հրաշալին վկայէ մատենագիր Ոգւոյն Քրիստոսական կրօնից. « Իսկ Սէրն՝ Քրիստոսի փրկչին ծնունդ հարազատ՝ ասէ իմաստասէրն այն քերթող, ըստ բնիկ նշանակութեանն զշնորհս և զիւնդրիւն յայտ առնէ (28)։ Կրօնն սուրբ, առ ի վերանորոգել զսիրտ ազգի մարդկան և ի նպաստ առաքինութեանց ուղղել զյօժարութիւնս մեր և զզորովանս, նոր իմն

հնարեցաւ կիրս. և ի յայտարարութիւն նորին՝ ոչ զսիրելութեանն անուն արկ ի գործ՝ որ թերի ունի զհշդրտութիւնն, ոչ զբարեկամութիւն՝ որ ի զերեզման անդր սուզանի, ոչ զզթութիւն՝ որ հպատրն է յոյժ յամբարտաւանութիւն. այլ եղիտ նա զանունդ Սէր, որ զերեսին զառաջինս յինքն բովանդակեա՝ և միանգամայն երկնագղեցիկ իմն ունի զօրութիւն։ Սովաւ կրօնն սուրբ յերկինս կոչս ուղղէ զմեր ախորժակս, և զտեսլ մաքրեալ զնոսին առ Աստուծոյն վերբերէ. սովաւ ուսուցանէ զայս ճշմարտութիւն սքանչելի, եթէ պարտք են մարդկան սիրել զմիմեանս՝ զի այսպէս ասացից՝ ընդ ձեռն Աստուծոյ, որ հոգևորէ զսէրն նոցին, և անցս իմն տուեալ նմին ընդ ինքն՝ զանմահական էութիւնն ևեթ պահէ անձին իւրում։

« Սակայն ոչ միայն քրիստոնէական առաքինութիւն է Սէրն՝ ծաղեալ ուղղակի ի Յաւիտենականէն և ի Բանէ նորա, այլ և սերտ իմն դաշնակցութիւն ընդ բնութեան։ Եւ այս իսկ անհատ ներդաշնակութիւն երկնից և երկրի, Աստուծոյ և մարդկան, կնիք է յայտարար ճշմարիտն կրօնից։ Վաղեմի ժամանակաց կարգադրութիւնք՝ բարոյականքն և քաղաքականք՝ բազում այն է զի հակառակ ընդդէմ եղանեն յօժարութեանց հոգւոյն. բայց քրիստոնէութիւն, նմին հակառակ, ցանզ ի համբոյրս հաշտից է ընդ սիրտս մարդկան, և ոչ պատուիրէ երբէք առաքինութիւնս տարանջատս և ինքնագոյս, այլ առաքինութիւնս որ ի մերոց պիտոյից ասի առնուն զծագումն

և ամենեցուն են պիտանիք։ Նա զԱՀրն հաստատեաց իրրև զդուր յորդաջուր յանապատի աստ կենցաղոյս (29)։»

Է

Այսոքիկ սահմանք Սիրոյ և այսքան վկայութիւնք պատկառելիք շատ իսկ են, որպէս կարծեմքն, ի ցուցանել թէ մեծապէս խաբեցան որք միանգամ ի յետին ժամանակս ի բաց մերժեալ զչքնաղագոյնն յարգասիս քրիստոսական հաւատոց զԱրն Աստուծոյ ի վեր քան զամենայն և զԱր ընկերին իրրև զանձին, զսէրն որ վեհագոյն է քան զաշխարհ, և քան զընութիւն բեղնաւորագոյն, և հզօրագոյն քան զմահ, փոխանակել կամեցան ընդ այնր զայլ ինն յօժարութիւն սոսկապէս մարդկեղէն, ոչ անշուք արդարև, այլ անզօր, աւա՛ղ, անճուկ և անկարող որպէս և ամենայն ինչ որ ի մարդոյ անտի գայ։

Լոկ և թափուր մնացեալք ի լուսոյ հաւատոց, խորհեցան անփոյթ առնել զԱստուծոյ և ի բարոյական կարգի, զոր օրինակ համարեալն էին թէ կարող իցեն անփոյթ առնել զնմանէ ի զիտութեան կարգին։ Եւ յետ ի բաց մերժելոյ զբանն յայտնեալ յԱստուծոյ, զմեծ լուսատուն հոգւոց, արտաքս յանձանց վտարեցին և զշնորհս նորին և զսէր։ Թոթափեալք անկեալք յերկնից անդրէն յանձինս իւրեանց, կարծեցին անմտաբար եթէ ի մարդկեղէն բնութեան անդ ուծացելոյ յիւրմէ արարչէն զտցեն նոքա զամենայն առաքինութիւն, զամենայն իմաստու-

թիւն, զամենայն կատարելութիւն, և հուսկ ուրեմն զեր-
ջանկութիւն բովանդակ։ Յայնժամ ապա եղեալ ի մտի
զխրոխտապանծն խորհուրդ առնելոյ զամենայն յանուն
մարդոյ լոկոյ, ի ձեռն մարդոյ և վասն մարդոյ, զուն
գործեցին բառնալ ի միջոյ ոչ միայն զքրիստոնէական
նկարագիր՝ այլ և զանուն ևս զԱիրոյն։ Եւ ի միում ուրեք
ի զարուց որ ոչ հեռին է ի մերմէս, ի լոյս պայծառ
քրիստոսական կրօնից, ոմն իմաստասէր առ մի ոմն
յաղքատաց խօսելով, և իշխեաց հայհոյել զայս հայհոյու-
թիւն սարսափելի. «Հայցես զու զի ողորմեցայց քեզ
վասն սիրոյն Աստուծոյ. այլ այդ բառ քստումն ընդ
ոսկերս իմ զնացուցանէ։ Թնդրեա մանաւանդ յանուն
մարդասիրութեան, և ողորմեցայց քեզ։»

Ո՛վ անմիտ իմաստասէր, չտեսանիցե՞ս զի առ սէր
երկրաւորդ առաքինութեան թիկունս յերկնաւորէն
դարձուցանելով, զքաղցրն և զպտղաւէտ գոյացութիւն
թողեալ՝ զուրուատիպ իմն ընտրես կերպարան անշուք և
ամուլ. չտեսանիցե՞ս զի որ զանց զսիրով արարեալ՝ ի մար-
դասիրութիւն բերիցի, ի քաղաքակիրթ կենաց ի խժդժու-
թիւն դարձ առնէ, յաւետարանէ ի հեթանոսութիւն,
յաղատութենէ ի գերութիւն։ Աղէ պատմեա մեզ զմար-
դասիրութեանդ քո պատմութիւն. և մի՛ երթեալ առ մար-
դակերս Ամերիկեայ և Ովկիանիայ խնդրեսցես զպատմու-
թեանդ վէպս. խնդիր արասցես՝ թէ քաջ՝ առ իմաստա-
սէրս իսկ Եղադայ և Հռովմայ, և ապա թէ եկեալ կշռես-
ցես զքոյդ ընդ սիրոյն հրաշալիս, և հաւանեսցուք քեզ։

Եւ ահա այսպէս, Եղբարք սիրելեալք, յորժամ անՁատեալ բաժանիցի որ ի միոՁէ միայնոյ աղբերէն հՁմարտութեան և սիրոյ, և իւրումն երթայցէ զհետ ամբարտաւան և խաւարային իմաստութեան, յանտեղիսն խարդաւանի և ի դարՁելիս։ Եւ զայսոցիկ զանյարիր վարդապետութեանց արդիւնս մեք իսկ տեսաք մերձ ի կատարած անցելոյ դարուն, որ անՁամանդեն զազգս և զազգինս յամենայն երկնաւոր մխիթարութեանց։ Կամ եղև ոմանց ընկերութիւն ինչ կազմել թափուր յԱստուծոյ և ի Սիրոյ. և մարդիկ՝ մարդասիրութեան անուամբն ի մահ ետուն զմիմեանս անդթաբար։ Հարկ եղև կրօնիցն Բրիստոսի դարձեալ զալ մտանել հանդերձ Սիրովն Աստուծոյ, և անդրէն վերականգնել զբարեկարգութիւն, զարդարութիւն, զխաղաղութիւն, զսէր ընկերին, և համառօտ՝ այնպիսի ինչ որ առաւելութեամբ ունիցի ինչ նմանութիւն ընդ հՁմարիտն մարդասիրութեան, կամ թէ կատարումն տայցէ նմին։ Յայնժամ ապա ընկերութիւնն սասանեալ և կործանեալ ի մրրկէ անտի՝ կանգնեցաւ վերստին և անդրէն ծագկեցաւ երկնայնովքն աղդեցութեամբք։

Զոր օրինակ յետ ամպրոպալից զիշերոյ ծագկունք գաՁտաբոյսք խառն զերկրաւ տարածեալք և տակաւին ևս անձրևով ծանրացեալք՝ ի հնչել առաւօտեան քաղցրասիւդ հողմոյն տակաւ ամբառնան, և ի ծագել նՁուլից արփենւոյն զարձեալ ծաւալեն բուրմունս անուշից ի վերկս ընութեանն սփռիելոյ, նոյնպէս և մեք

ոգիքս ոմնակոխ եղեալք արշաւանաց կրից, նոյնպէս և ժողովուրդք ինքնին ի մրրկէ հարուածեալք, յորժամ զարձեալ ընդունիցին զաղդումն Սիրոյն Քրիստոսի։

Ո՛հ. անուն առաքինութեանս ևեթ, անուն լի քաղցրութեամբ և շնորհիւ, յորժամ ըստ արժանւոյն ծանիցի՝ զարթուցանէ ի միտս և ազդէ ի սիրտ մարդոյ զամենայն որ ինչ աստուածային կայցէ յերկինս և որ ինչ քաղցրագոյն զոսանիցի յերկրի։ Ճառագայթ է նա մշանջենաւոր սիրոյն Աստուծոյ ցոլացեալ յազգ մարդկան յանկեանն և ի տառապեալ. ուղիս է փափկութեան զորովագութ սրտին Քրիստոսի, զեղանչոյլ պայծառութիւն առաքինութեան և կատարումն աւետարանին։

Ը.

Այլ մի՛ թէ յետ աւետարանի՞ն քարոզութեանն ևեթ ծանուցաւ Սէր, և անծանո՞թ էր ամենեին առ նախնեաւք. և հեթանոսք ինքնին ո՞չ արդեաւք վարէին բառիս առ ի յայտ առնելոյ զբարեխնամ գորով զթոյ մարդկան առ միմեանս։

Ոչ, Եղբարք սիրեցեալք, ոչ էր հնար անծանօթ մնալ Սիրոյ և յառաջ քան զքրիստոնէութեան ժամանակն։ Շնորհն ի կատարումն ևեթ բնութեան պարգևի. վասն որոյ հարկ էր տարերաց աստուածարեալ փոխակերպութեանս այսորիկ զոսանել և ի խորս անդ բնութեան։ Գորովալից զթասիրութիւնք տկարացեալ էին ի մար-

դիկ և նուազեալ, բայց ոչ և չիջեալք. և վկայ երաշխաւոր տողն Տերենտեայ՝ տող վսեմ և ցանկ դրուատեալ,

« Մարդ եմ, և ոչ ինչ մարդկեղէն յինէն օտար համարիմ (29) ։ »

Այսպէս անա և հեթանոսք անգամ վոքր ի շատ դիտակք էին մարդասիրութեան, եղբայրսիրութեան, բարերարութեան և անձնանուէր նահատակութեան. և անունն բովանդակիչ այսր ամենայնի՝ ի հելլենականէն ի հռովմայեցւոցն մտեալ բարբառ, յառաջ ևս քան զՈրդոյն Աստուծոյ քարոզութիւն՝ զեղեցկագոյնն էր ի բառս լեզուին։ Մտադիր հրաշանամբ և մեք ըստ հասարակաց կարծեաց՝ ընդ զեղեցիկս այս հատուած բանիցն Կիկերոնի՝ որ բաղում անգամ ի վկայութիւն կոչեցեալ է. թէպէտ և նորայն սէր իմաստասիրական՝ որպէս տեսջիք հուպ ընդ հուպ՝ անձուկ իցէ յոյժ և նկուն առ մեծ վայելչութեամբ և փառօք քրիստոսական Սիրոյն։

« Զիք ինչ ի սահմանս բարոյականին զեղոյ, ասէ « մեծն այն հռովմայեցի պերճախօս, այնպէս պայծառ և « մինչև ի հեռաստան ցոլացեալ, որպէս միաբանութիւն « մարդոյ ընդ իւրումն նմանուոյ. ընկերակցութիւն յորում « ամենայն բարիք հասարակաց իմն իցեն՝ Սէր է այն, « կամ թէ սէր ազգի մարդկան։ Այսր զգացման արմատք « ի հայրական գթասիրութեան կան. և անտի ապա ի « ձեռն ամուսնութեան և ազգակցութեան զօրից միաւո- « րեալ զընտանիս՝ արտաքս կոյս ձգի ծառն՝ նախ « հեռաւորացն արենակցութեանց ոստովք, և ապա

« խնամութեամբք, զրացեաց մերձաւորութեամբք, նը-
« մանօրինակ սովորութեամբք և օրինօք, ուսուիք և
« դաշամբք ժողովրդոց, և անսահման ինն զօղիս որ
« զբովանդակ աղգ մարդկան միանգամայն շաղկապէ։
« Յայսմ համաշխարհական միաբանութեան՝ հատուցա-
« նել իւրաքանչիւր զիւրն, և յամենայն անդամս մարդ-
« կայինս աղգի գնաւասարութիւն պահել՝ արդարու-
« թիւն է. առաքինութիւն՝ որում արբանեկեն գթութիւն,
« բարութիւն, քաղցրութիւն, բարեգործութիւն և ամե-
« նայն այսպիսի լաւութիւնք (30)։ »

Անգիտանամք մեք եթէ կանխագոյ՞ն ինչ լեալ իցէ քերթողն այնմ ամենայնի զոր Փրկիչն մեր հանդերձեալ էր քարոզել, զմեծն զայն եղբայրակցութիւն մարդկան, զմիաբանութիւն բնութեան և աղգի, և զնամաշխարհական սիրակցութիւն որ այնմ ինքնին գնետ գայ. կամ թէ մարդարէացա՞ւ ինչ Կիկերոն, զի այսպէս ասացից, զաւետարանականն զգացմունս, ընդ Սիրոյն անուամբ (որ այն ինչ զեռ ևս ստուերակերպ նկարագրէր) ժողովեալ զամենայն որ ինչ զորովական՝ որ ինչ միաւորական զտանէր ի մարդիկ։ Այլ զայս զիտեմք զի միտք վսեմախոհք և սիրտք վեհագոյնք հոխացան երբեմն զուշակականաւն աղդեցութեամբ՝ որպէս զի թարգմանք կացցեն պիտոյից իւրեանցն ժամանակաց։ Լսեն նոքա զաղաղակն բնութեան զնեարքին, և հաւատարիմ բարբառով կրկնեն զարձագանգսն առ ամբոխս աղգաց։ Սմին իրի և արք աւագագոյնք՝ յառաջագէմք ընթանան միշտ իրա-

քանչիւր իւրումն զարու՝ որ չառնու ի միտ զբանս նոցա։ Ապա ուրեմն այս բանք զեղեցիկք հոյակապ պերճախօսին և քերթողին քաջի, որ և ինքեանք ևս ոչ բովանդակ իմանային անշուշտ զոր ինչ ասէին, ցոլացմունք ինչ են ի միտս նոցա՝ թէ կամիցիք՝ աւետարանին առաւօտու, մինչ չև էր արեգակն ծագեալ ընդ ոլորտս երկնից և համբրէն լուսաւորեալ զնոսին։

Եւ սակայն եթէ ի մօտոյ հայեցեալ նկատիցեմք, այս ևս ցոլացմունք անհետանալ թուին, և հաղիւ թէ հեռաւոր ինչ նմանութիւն նշմարի ի սոսա ընդ աւետարանականին սիրոյ։ Բանզի պերճախօսն հռովմայեցի մերթ ի բնաւորականն յօժարութիւնս ամփոփեալ սահմանէ զիւրն Աէր, որ ոչ ևս առաքինութիւն է, և մերթ ի զդածմունս հաստատեալս ի փոխադարձն իրաւունս, որ արդարութիւն ևեթ է, որպէս և Կիկերոն ինքնին խոստովան լինի պարզմտութեամբ յաւարտ այնր խօսից, քան զլոկ հաւասարութիւն իրաւանց ոչ ինչ զիտելով զեղեցկագոյն։

Արդ միակ խնդիր այս է ընդ Կիկերոնին սէր մարդկէն և ընդ աստուածային Աէր Քրիստոսի Յիսուսի. բարի առնել այնոցիկ որ մեզ ինչ առնեն բարիս, կամ թէ և այնոցիկ առնել բարի՝ որ մեզ չարիս առնիցեն։ Ո՞ր ի սոցանէ կատարելագոյն իցէ։ Ասաց իսկ Քրիստոս յաւետարանի անդ իւրում. Եթէ սիրիցէք զայնոսիկ որ սիրենն զձեզ, զի՞նչ առաքինութիւն իցէ, ո՞ր վաստակ քաջութեան. և եթէ բարի առնիցէք ձերոցն բարերարաց՝ զի՞նչ ասելի քան զհեթանոսսն առնէք։ Բայց սիրեցէք

զթշնամիս ձեր, բարիս ընդ չարի հատուցէք, և աղօթս արարէք ի վերայ այնոցիկ որ լկենն զձեզ և հալածեն. զի եղիջիք որդիք Հօր ձերոյ որ յերկինս է, որ զարեգակն իւր ծագէ և զանձրևն ածէ ի վերայ չարաց և բարեաց (31):

Կամի՞ս գիտել եթէ որպիսի՛ ինչ էր սէրն առ ազգս մարդկան ըստ մտաց Կիկերոնի. ծանիր նախ թէ զինչ հեթանոսքն իմանային ազգ մարդկան ասելով, ևս և իմաստասէրքն և քերթողք: Թէ ելանէր ևս այն երբէք ըստ հայրենեացն սահման, այլ անզգր քան զազգսն նիզակակիցս բնաւ ոչ անցանէր. և ստրկացն դասք, իմա երկուք յերիր մասանց բնակչաց աշխարհիս, բացէ ի բաց մերժեալք էին ի նոցանէ: Թէպէտ և զերասանձք էին Կիկերոնի ասացուածքն զնամաշխարհական զօրից բովանդակ ազգի մարդկան, թէպէտ և զեղեցիկ էր Տերենտեայ տողն որ զընկերահաչտ միաբանութիւն քարոզէր առ մարդիկ, սակայն այր այլազգի կայր և մնայր Հռովմայեցւոյն թշնամի. խուժդուժ էր նա, յետ պարտութեանն թէ ոչ միշտ սատակման՝ զէթ զերութեան արժանի (32):

Թ

Այսպա այսուհետև ի բաց թողեալ զնետազօտութիւն աղնուական ջանից և զեղեցիկ զդածմանց և մեծամեծ աղդմանց սակաւաթիւ արանց ընտրելոց, եթէ ի քնին առնուցումք զնեթանոսացն քաղաքականութիւն յառաջ

քան զքրիստոսական կրօնիցս երևումն, տեսանեմք ի հասարակաց արդիւնս գործոց յամենայն տեղիս և յամենայն ժամանակի զապիկարութիւն այնր բնաւորական սիրոյ մարդկան, այնր մարդասիրութեան ասեմ որ զուր տարապարտուց պաճուճեալն էր Սիրոյն անուամբ, զի և աւելի ինչ քան զանունն իսկ ոչ ունէր։

Հանդերձ նովին մարդասիրութեամբ՝ զոր ճոխաբար ներբողէ Կիկերոն, չէր ինչ արգել իրաւունս ունելոյ հարց սպանանել զորդիս իւրեանց, և զաղջայն նորածինս բացընկեցիկ առնելոյ ըստ իրաւանց, և ոչ դարձեալ խափանէին զերութեանցն արհաւիրք, պատերազմաց կոտորածք, այպանումն մարդկան և մարդազոհք բիւրաւորաց ի չուրջ տեսանելեացն տեղիս՝ ի զուարճութիւն ամբոխին։

Զձրի բարերարութեան զանունն ևեթ հազիւ գիտէին հեթանոսացն ժողովուրդք. տառապելոց կարեկցութիւն՝ ի տկարութիւն համարեալ էր առ նոսա, և աղքատաց ձեռնտուութիւն առ հասարակ ո՞ւր երևէր ի նոսա։ Ո՞ւր այս խնամք զորովագութք քրիստոնէական բարերարութեան՝ առատաձեռնեալք առ ախտաժէտս, առ ալեորս, առ որբս, առ ընկեցիկն մանկտի, առ ապաշխարող կանանին։ Հապա ցուցցեն մեզ ի Սպարտա և կամ ի Հռովմ այնպիսի ինչ որ զնմանութիւն ևեթ բերիցէ զՍիրոյն ապաստանարանաց որ անթիւ են ի բազմութենէ։ Յոլով դրուատիք ընծայեցան հնոցն հիւրասիրութեան, և սակայն անծանօթ էր առ նոսա զեղեցիկն քան

զամենայն հիւրասիրութիւն, այն զոր Երկինք մատակարարեն երկրիս յապարանս անդ ազքատին ի մակագրեալն ուրեք պերճ առասութեամբ Օրհնեա Աստուծոյ (32), ուր արդարև իսկ Աստուած ինքնին սպասեալ մնայ իմն սփոփանս մատուցանել ամենայն աղետից աշխարհի։

Կամիցի՞ք տեսանել առ հեթանոսս զնշանակս ինչ ազքատասիրութեան. միտ դիք ազաչեմ։

Պղատոն յիւրումն Հասարակապետութեան, մեծն այն վարդապետ մարդկեղէն իմաստութեան Պղատոն, անասուն համարի զազքատն՝ զոր պարտ է ասէ բառնալ ի միջոյ։

Պղատոս զՀռովմայեցւոց ժողովրդեանն կարծիս ի տեսլարանին հոլանեալ ասէր. «Զարիս անհնարինս «զործէ որ հայ տայ մուրողին. զոր ինչ տայն կորուսանէ, «և զվիշտս եղկելւոյն առաւել ևս յերկարէ։»

Գաղերիոս Մաքսիմիանոս կամեցեալ ձեռնտու լինել հասարակաց զոյն ծախիւք արծաթոյ, հրաման տայր ժողովել զամենայն զմուրոցս Հռովմայ, ի նաւս հնոտիս իջուցանել զնոսա և ընկղմել ի խորս ծովու։

Քաւ ի մէնջ ասել եթէ այս ամենայն արհաւիրք որ առ Յոյնս և առ Հռովմայեցիս զործէին՝ քաղաքականութեան նոցին իցեն արդասիք. սակայն ստիպիմք յայտ առնել զի մարդիկ որ ի յոյսով ինչ իրս օրինակք մեզ մնացին զարմանալիք, թերևս և անզուգականք՝ մանաւանդ ի ձեռագործս արուեստից, և որ առաքինութիւնս ևս մարդկեղէնս գերածայրեալս զործեցին, հանդերձ

այնքան զիտութեամբն և զօրութեամբ և փառօք՝ ի մարդասիրութեան և ի բարերարութեան սակին խոնարհեցան անկան մինչև ի գետին։ Եւ ընդէ՞ր արդեօք. այլ զի ամենայն զթասէր յօժարութիւնք որ ի մարդումս՝ հեռացեալ մեկնեալ էին յաստուածեղէն նպատակէ անտի որով միայն սրբին նոքա և պտղաբերս և հանրականս գործին, և միանգամայն լոկ և թափուր էին ի զերբնական զրգռմանէն որ տեսականս առնէ զնոսին և աննկունս, և մշանջենաւորակիցս Աստուծոյ։ Կորոյս մարդն, աւա՜ղ, զսէրն Աստուծոյ. նմին իրի կորոյս և զսէր ընկերին, և ի պատճառս մեղացն անձամբ զանձն կործանեալ արկ ընդ ձեռամբ ինքնահաճ ամբարտաւանութեան։ Աւերակ մեծ հրաշակերտին յարարածս Աստուծոյ, յորում են այն հիւաղ մարդկեղէն՝ անձնասպաշտ, անձնասէր և շահախնդիր, անձին միայնոյ զիւրութեանն խնամով մոլեղնեալ՝ ճարակի զոյիւ և արտասուօք, քրտամբք և արեամբ այլոց ի մարդկանէ։

Քանզի զարձեալ՝ անհնար է մարդումս յաղթող լինել ինքնահաճ կրից և երրակի ցանկութեանցն յորս արմատացեալ կայ և կազդուրեալ զօրանայ ցանզ կատաղին այն թշնամի մարդկային ընկերութեան, եթէ ոչ վերնականաւ իմն զօրութեամբ և զերբնական սատարութեամբ։ Արդ այս զօրութիւն՝ քան զբնութիւն մարդոյ զերազանց, որ յաղթող առնիցէ զնա ցանկութեան և անձնասիրութեան, սէրն Աստուծոյ է միայն, սէր անժամանակ և անսահման՝ հեղեալ սքանչելապէս ի սիրտ մարդկութեան։

Որ որեմն եղև օր, և Աէրն կենդանարար եկն և բնակեցաւ յաշխարհիս՝ ծնանել զսա վերստին, և պարգևել սմին զշնորհս իւր և զազգմունս. և անաւասիկ կարճառօտ բանիւ այս պատմութիւն հրաշալի՝ ըստ անսուտն վկայութեանց երկնի և երկրի։

Ժ

Աստուած որ Աէրն է յաւիտենական և իսկական, ասէ Առաքեալն սիրոյ (33), այնպէս սիրեաց զաշխարհս՝ զի զմիածին Որդին իւր ետ, զի ամենայն որ հաւատայ ի նա՝ մի՛ կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս (34)։ Եւ յայսմ առաւելապէս յայտնի եղև սէրն Աստուծոյ առ մեզ, զի նա նախ սիրեաց զմեզ, մինչդեռ մեք ոչն սիրէաք զնա և էաք յանիրաւութեան, և ի մեղս, և ի մահու (35)։ Յայնժամ ահա առաքեաց նա առ մեզ զՈրդին իւր պատարագ քաւութեան մեղաց մերոց, որպէս զի նորին արեամբն վերածնեալք, և պատարագաւն ի հաշտութիւն եկեալք, այնուհետև աստուածային իմն կեցցուք կեանս, և յետ կերպարանակից լինելոյ վարուց նորին և առաքինութեանց՝ լիցուք յաւուր միում և փառացն հաղորդակիցք (36)։

Բանն Աստուած առաքեալ ի Հօրէ՝ էջ յերկիր միանալ ընդ մերումս բնութեան, որ ապականեալն էր մեղաք և վարակեալ ցանկութեամբ, և խստացեալ անճնասիրութեամբ, զի կանգնեսցէ զսա և ջեռուսցէ, ընդարձակեսցէ և կենդանարարեսցէ, ուսուցանելով սմա թէ

զիարդ լինիցի հշմարտապէսն սիրել, այսինքն է այնպէս որպէս Աստուած սիրէ, որոյ վասն և մարմին եղև [37]։

Բանն Աստուած յաւիտենական՝ մարմին եղև ի ժամանակի-իբրև զմեզ. ծնաւ ի մերմէ սեռէս, զմերս արիւն յերակունս իւր խառնեաց, և ազգս մարդկան յաղագս բանութիւնս իւր ի կարգ արկեալ թուեաց և զԱստուած [38]։ Աստուած որդի եղև մարդոյ, զի և մարդն լիցի որդի Աստուծոյ, և մարդկութիւնս ողջոյն բարձրասցի, փառաւորեսցի և աստուածասցի [39]։

Եւ արդ, Եղբարք սիրեցեալք, քանզի աստուածեղէն բնութիւնն խառնեցաւ այսպէս ընդ մարդկեղէնս բնութեան [40] զի կերպարանափոխ արասցէ զսա, և զսերունդս Զամայ սերունդ արասցէ Աստուծոյ, ո՞վ ոք ոչ տեսանիցէ զի սէր մարդկան խառնեալ միացեալ ընդ սիրոյն Աստուծոյ, ըստ նմին համեմատութեան առէ զառուն անսահման։

Սա է աւասիկ քրիստոնէականն Սէր։ Այսպէս ահա, որպէս արդ իսկ ասացաք, պատուաստեցաւ երկնայինս այս առաքինութիւն յամուլն մարդկութիւն՝ ի բեղմնաւորել զոգիս, յընդարձակել զսիրտս, և քան զտիեզերս ամենայն մնծատարածս յարդարել զնոսին և երկնանմանս ընդարձակութեամբ։

ԺԱ.

Յաւուր յորում իսկական Որդին Աստուծոյ եկն

իսկապէս որդի մարդոյ, զի և մարդն ինքնին որդի Աստուծոյ լինելոյ հշմարիտ որդեգրութեամբ (41), եղբարք եղաք մեք Քրիստոսի, ոչ միայն այնու զի և նա մարդ է՝ ազամածին զոլով իբրև զմեզ, այլ և այնու զի Աստուած է, որդեգրութեամբս մերով Հօր իւրում։ « Տեսէք, գոչէ « աստանօր ի հիացման իւրում երանելին Յովհաննէս, « տեսէք որպիսի՛ սէր շնորհեաց մեզ Հայր, զի որդիք « Աստուծոյ կոչեսցուք, և եմք (42) ։ »

Եւ ո՞վ ոք ոչ և աստանօր սքանչացի ընդ լրումն աստուածայնոցն զթասիրութեանց. զի տա՛ ի փարատել յայսմ մասին զամենայն կասկած երկիւղի խաբէութեան և պատրանաց՝ նա ինքն Որդին Աստուծոյ բարձրելոյ արժան համարեալ հաւանել ընդ մերս որդեգրութիւն, ոչ ամօթ համարի անուանել զմեզ եղբայրութեանն քաղցր անուամբ՝ այն ինչ հանդերձեալ համբառնալ յերկինս և փառաց ի փառս բարձրանալ. « Երթ դու առ եղբարսն « իմ և ասա ցնոսա՝. երանեմ ես առ Հայրն իմ և առ « Հայր ձեր, և Աստուածն իմ և Աստուած ձեր (43) ։ » Ո՛վ սքանչելահրաշ բանիցն. արժան է հալել սրտից, Եղբարք, ի լուր այսքան և այսպիսի սիրոյ. « Տեսէք « որպիսի սէր շնորհեաց մեզ Հայր, զի որդիք Աստուծոյ « կոչեսցուք, և եմք ։ »

Բայց և քանի՛ օն աստի նորանոր զօրաւածք զորովալից ընտանութեան ի մէջ մարդկան ։ Որդիքս յերկրի՝ միոյ հօր ծնունդք Աղամայ, որդիք եմք և միայնոյ Հօր երկնաւորի որ է Աստուած. ապա ուրեմն երկնային եղբարք

ընդ միմեանս, նոյն և կրկնակի ընդ Քրիստոսի եղբայրակիցք։

Բա՛ըէ. եթէ մէն մի յիմոց նմանեաց եղբայր իմ է ըստ այսքանեաց զլեսոց, և եթէ այսչափ պատուասիրեալ է յԱստուծոյ, և եթէ Երկինք այնչափ պատիւս և այնպիսիս յաւել ի նա մեծութիւնս, ո՞րքան պարտիս ի վերայ իմ կապիցէ եղբայրութիւն այսպիսի։

Հարկ ուրեմն է ինձ սիրել զմարդ, զառաքեալն, զկարօտեալն, ո՛ ոք և իցէ, ոչ միայն իբրև զիմ նմանակից, իբրև զարարած իմացական և աստուածաստեղծ՝ որ յանձին բերէ ի բնէ զնկարագիրս ինչ Աստուծոյ եղծեալս ըստ մասին, այլ և իբրև զնորին պատկեր կենդանի՝ աստուածայնովն նորոգեալ ձեռամբ, և զնով արեանն իւրոյ փրկանաւորեալ։

Հարկ ուրեմն է սիրել ինձ զնա, ոչ միայն զի եղբայր իմ է ըստ բնութեան կարգին՝ իբրու նորին մարդկեղէն ազգի սերունդ, այլ զի և նա և ես աստուածային ինն ունիմք ազգակցութիւն՝ իբր ի բարձրագոյն և ի զլխաւորագոյն կարգի եղբայրակիցք։

Հարկ ուրեմն է ինձ զարձեալ սիրել զնա իբրև զՔրիստոսի եղբայր և նորին յերկինս ժառանգակից, իբրև զԱստուծոյ որդի հրաւիրեալ ի թագաւորել ընդ նմա և ընդ իս ի փառսն իւրում. կամ թէ սիրել զԱստուած ի ի նմա, և զնա յԱստուած՝ նովին ներգործութեամբ սիրոյ (44) և եղբայրական խանդաղատանաւք։

Այս է ահա քրիստոսականն եղբայրութիւն, և հոգի

նորին և իսկութիւն և կատարումն Սէրն է, որպէս և տեսէք։ Սէրն, ասէ առաքեալ, կատարումն տայցէ եղբայրութեան ձերում. «Եղբայրսիրութեամբն զսէր։»

ԺԲ

Զկորնթացիսն յեղբայրսիրութիւն յորդորելով առաքեալն Պօղոս, զիտէք՝ ասէր՝ զգթութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի որ մեծատունն էր՝ վասն ձեր աղքատացաւ, զի զուք նորա կամաւոր աղքատութեամբն մեծասջիք։

Յորժամ ոչ ի սիրոյ առնիցի ողորմութիւն՝ խոնարհացուցիչ է. վասն որոյ ի բաց մերժեմ ես զոր ինչ է զի խրոխտանօք իմն և ի ցոյցս տայցես, և է զի ի հարկէ և կամ տրտմութեամբ։ Իսկ եթէ յանկեղծ մտաց և զուարթ երեսօք զիջանիցիս առ իս, որպէս եղբայր եղբօր ձեռնտու, եթէ յառաջ քան զպէտսն իմ զսիրտ քո տայցես ինձ, սիրտ իմ ընդարձակի և ի քոյդ սիրտ ընթացեալ զեղու։ Ոչ ես ծանր է ինձ քոյոցդ ընչից լինել հաղորդակից մասամբն այնու՝ թէպէտ և յոյժ իսկ զուղնաբեայ իցէ. քանզի կանխեցեր զու և ընկալար զիս ի կցորդութիւն սիրոյ քո և զթութեան։ Այս արդարև, եթէ կամիս զի անարատ պահեցից ես զպատիւ իմոյ մարդկութեանս, և մի նուաստացայց ի քոց պարգևաց, հարկ է քեզ հաւասարութիւն իմն ի մէջ արկանել սիրով ընդ իս և ընդ քեզ. զոր օրինակ և երանելին Յակովբոս յայտ առնէ յիւրումն

հրաշալի թղթին գնաւասարութիւն որդւոցն Աստուծոյ։

Զսոյն և Որդին Աստուծոյ արար. զի մինչև ողորմութիւն արարեալ ազգի մարդկան, և ձեռն օգնութեան կարկառեալ նմին, և այնքան բարիս առատաձեռնեալ, մերկացաւ զփառս իւր զի մօտազոյնս մերձեսցի առ մեզ։ Եղև նախ Որդի մարդոյ, եղբայր մեր Ադամ, և յետ եղբայրանալոյն ընդ մեզ և հաւասարելոյ՝ ապա և զանձն իւր բովանդակ ետ մեզ. քանզի ետ մեզ զսիրտ իւր, զյօժարութիւնս իւր, զոգի և զխորհուրդս իւր, զմարմին իւր և զարտասուս, զբիրտն և զվաստակս, զկեանս իւր և զմահ, զմարդկութիւն իւր և զաստուածութիւն, զամենայն մխիթարութիւնս աւետարանին իւրոյ, զամենայն զշնորհս խորհրդոցն իւրոց, զամենայն օրինակս առաքինութեանց և վարուց իւրոց, զամենայն հոխութիւնս ողորմութեան իւրոյ, և զամենայն զանձս յաւիտենականութեան իւրոյ։

Եւ արդ յորմէ հետէ վերստին ծնայ ես նովաւ, ոչ միայն պարտ է ինձ պատուոյ մարդկութեանս իմում զգուշանալ ի գնացս իմ ընդ մարդկան, այլ մանաւանդ քեզ արժան է՝ ո՞ որ և իցես դու՝ զդոյշ կալ յանարգելոյ զպատիւ քրիստոնէութեան իմոյ։ Պարտ է քեզ յիմումս քրիստոնէութեան մեծարել զիմս թագաւորութիւն իբրև զորդւոյ Աստուծոյ, և յաղքատութեան իմում գնահանին իմ իրաւունս ի ժառանգութիւն երկնից երանութեան։

Ապա ուրեմն ես որ Քրիստոնեայս եմ՝ և Աստուծոյ որդեգիր, եղբայր Քրիստոսի, ժառանգորդ արքայու-

թեան երկնից, չկարեմ ըստ արժանւոյն ընդունել ինչ եթէ ոչ յԱստուծոյ և կամ յանուն նորա. զի ի նմանէ եւթ կարող եմ ես հայցել առանց նուաստանալոյ. և յորժամ առ քեզ դիմիցեմ սիրելիս ինչ վչտաց իմոց զոսանել, իբրև առ պաշտօնեայ Տեսչութեանն Աստուծոյ դիմեմ և առ մատակարար դանձուց նորա. աւանդապահ եւթ ես զու պարգևաց նորա։

Սմին իրի իսկ Եղբարք, և ազգատն քրիստոնեայ յանուն Աստուծոյ հայցէ զողորմութիւն և վասն սիրոյն Աստուծոյ. և զոր հայցէն ի նմանէ իրմէ ի հոխապանէ քան զինքն՝ յանուն Աստուծոյ, ոչ այնչափ նիւթականն է նպաստ, որչափ եղբայրսիրութեանն վկայութիւն. «Յանուն Աստուծոյ, ասէ, արա Սէր.» այսինքն է սիրեա նախ, և ապա ողորմեա։

Այլ ասիցէ ոք արդեօք. ոչ ինչ կարի անիրաւին ուրեմն որք խորշին մերժին յողորմութենէ իրրու յանարդութենէ ուստեք։

Յիրաւի էնոցա խորշել յերեսաց հնոյն ողորմութեան, զոր իմաստասէրքն առաջինք և հեթանոսք առնէին, և յերեսաց լոկոյ մարդկային ողորմութեան՝ որ ի սնապարծիին առատաձեռնութենէ զայ յառաջ և կամ յանհարու զթասիրութենէ։ Այս, այն ողորմութիւն՝ որ պարգև է մարդոյ առ մարդ, յանուն սոսկ մարդոյ, նուաստութիւն է ընդունողին, և ամենայն անձն որ սակաւ մի ազնուութիւն ունիցի՝ ոչ կամեսցի և ոչ փչրանս ինչ առնուլ անտի։ Բայց անիրաւին եթէ

խորշելոյն յողորմութենէ որ յանուն Աստուծոյ հայցի, և յաստուածակոյս կողմանէ անտի շնորհի. անիրաւին ընդդէմ քրիստոնէական Սիրոյ, և եթէ խորշին ի նմանէ՝ պատճառք այն են զի չճանաչեն զնա։

Ոչ այդպէս. աստուածականն ողորմութիւն, պարգևն Աստուծոյ ի ձեռն Քրիստոսի, և տուրք մարդոյ ի ձեռն սիրոյ, և զի միով անդուգական բառիւ զամենայնն բովանդակեալ ասասցուք՝ Սէրն, ոչ նուաստացուցանէ երբէք, այլ մանաւանդ բարձրացուցանէ և առաւել ևս միաւորէ զմարդիկ։ Քանզի ո՞ր որդի է որ ոչ պարծեսցի՝ պարգևս ի հօրէն ընդունելով, և յայնպիսւոյ Հօրէ, իբրու սիրոյ նորին և զորովոյն զրաւականս։ Եւ այլազգ ևս. զի՞ զդ ոչ յաւելուցու համաչունչ միաբանութիւն եղբարց՝ յորժամ հաւասարազոյնս, և մանաւանդ մտադիրագոյնս բաշխեսցին պարգևք հօրն առ որդիս։

Եւ ահա այս է յեկեղեցւոջ Քրիստոսի ձեռնտուութիւն եղբարց, աւետարանականն աստարութիւն, Ողորմութիւնն քրիստոնէական. և եթէ անունդ այդ ծանր է լսելեացդ փափկութեան՝ իբրև ամօթապարտ ինչ իրաց յուշարար՝ արտաքոյ քրիստոսական հաւատոց, վսեմագունիւն կոչեա զնա և սեպհականագոյն անուամբն, որ է Սէր աստուածեղէն։

ԺԳ

Զամենայն ինչ սկսաւ առնել Յիսուս, և ապա ուսուցանել (45)։

Զեղբայրական սիրոյն ևս օրինակ ետ մեզ Փրկիչն, Եղբարք. և մնայր զպատուիրանն յարդարել՝ մինչչև կատարեալ նորա զպատարագն։ Վասն որոյ յառաջագոյն քան զմահ իւր ասէ ցաշակերտսն. «Որդեակք իմ, «փոքր միւս ևս ժամանակ ընդ ձեզ եմ։ Պատուիրան նոր «տամ ձեզ, զի սիրեսջիք զմիմեանս որպէս և ես զձեզ «սիրեցի (46)։» Եւ յետ սակաւ միոյ դարձեալ հաստատէր Փրկիչն մեր զաստուածայինն զիւր օրինադրութիւն Սիրոյ և ասէր. «Այս է պատուէր իմ զի սիրեսջիք զմիմեանս «որպէս ևս զձեզ սիրեցի (47)։» Եւ առ ի քաջ խելամուտս առնելոյ զնոսա առաքինութեանն զոր պատուիրէր նոցա, յաւել վաղվաղակի և զայս պարզաբանութիւն, որով ևս քան զևս պայծառանայ տիրադոյնն ի տիպս կերպարանաց նորին. «Մեծ ևս քան զայս սէր ոչ ոք ունի, ասէ, «եթէ զանձն իւր դիցէ ի վերայ բարեկամաց իւրոց։» Բնր արդ խորագոյնս միտ դիցուք բանից սիրայնոյ կտակիս։

Եւ նախ զի՞ է զի այնպէս խօսի աստէն զՍիրոյ Քրիստոս՝ որպէս եթէ սա միայն իցէ պատուիրան իւր, և այլ ինչ չիցէ պատուիրեալ. «Ո՛հ, ասէ մեծն Գրիգոր, «քանզի այլ ամենայն պատուիրանք ի Սէր անդր «վերբերին իբրև յիւրեանցն ծագումն, և ամենայն զոր «ինչ պատուիրեաց Փրկիչն յաւետարանին իւրում՝ «զՍիրոյն Աստուծոյ և զընկերին կախեալ կայ, զոր «օրինակ և ոստք և կողերք ծառոյն ի միոջէ ընդ անտի «արձակին և զմի արմատ հասարակաց ունին (48)։» Տեսանէ՞ք, Եղբարք իմ սիրեցեալք, եթէ զի՞ արդ համա-

ձայն է այս մերոցս բանից զորս հոխաբարյայտ արարաք։

Եւ երկրորդ անգամ, եթէ կամիցիմք բարւոք ի միտ առնուլ զխորհուրդ բանիցն Քրիստոսի, միտ դիցուք երեցունցս այսոցիկ իրաց։

Նախ զի պատուիրանն նոր է սա, ասա ուրեմն և որիշ ի հնոյն զոր քարոզեացն Մովսէս։ Մովսիսեանն պատուիրան զայս ասէր. «Սիրեսցես զընկեր քո իբրև զանձնքո։» Արդարութիւն է այս լոկ, և մարդկեղէնս բնութիւն մինչև ցայնժամ ոչ հանդարտէր առաւելագոյն սիրոյ։ Իսկ Քրիստոսի պատուիրանն զինչ. «Սիրեսջիք, ասէ, «զմիմեանս՝ որպէս ես զձեզ սիրեցի.» այս ինքն է՝ ըստ իմիք առաւել ես քան զանձինս։ Կատարումն է այս և ծագ սիրոյ, բայց օգնականութեամբ շնորհացն Աստուծոյ ոչ ի վեր է քան զզօրութիւն առն քրիստոնէի։

Երկրորդ անգամ, զի պատուիրան Քրիստոսի է սա, առանձինն նպատակ իւրոյ զալստեանն յաշխարհս, և իբրու խսկութիւն վարդապետութեան նորա։ Ապա ուրեմն Սէրն զուստր է Քրիստոսի, և պատուէր սիրոյ ընկերին՝ իւր իսկ սեպհական պատուէր է։ Զիք կրօն յաշխարհի որ կարող իցէ իւր ասել զնա, և ոչ խմաստասիրութիւն որ անձին արդասիս համարիցի զնա։

Երրորդ անգամ, զի օրինակ սիրոյն մերոյ ինքնին Քրիստոս է, որ այնչափ սիրեաց զմեզ՝ մինչև զանձն իւր եդ ի վերայ մեր։ Վասն որոյ և դու պարտիս սիրել զընկեր քո՝ ոչ միայն զինչս քո և զհանգիստ և զառողջութիւն նուիրելով առ սէր նորա, այլ և զկեանս անձինդ

տալով վասն նորա ի փրկութիւն հոգւոյ նորին, ոչ ինչ բնաւ խնդրելով փոխարէն՝ ոչ զընտանեաց քոց մեծութիւն, և ոչ զանուանդ քո զփառս, այլ միայն վասն սիրոյն Աստուծոյ և սիրոյ ընկերին։

Սասանի արդեօք արիութիւն քո, և վարանի սիրտ քո... Հայեաց ի Քրիստոս ի նախատիսն քո. նա ընդ օրինակին տայ քեզ և չնորհս նմանող իւր լինելոյ։ Ընդարձակեա ուրեմն զոգիդ քո ի շունչ իւրումն ողոյ։ Ա՛հ. նորայն սէր ոչ ի Հրեայսն սահմանի, ոչ յիմաստունս և եթ և ոչ յարս բարիս ամփոփի, այլ առ ամենայն մարդիկ տարածի, առ մեղաւորսն որպէս և առ արդարս, առ ամբարիշտսն որպէս և առ բարեպարիշտ հաւատացեալս, առ թշնամիսն իւր ոսերիմս որպէս և առ բարեկամսն և աշակերտս։ Այո, և առ թշնամիսն իւր ևս։ Յետ այնչափ քաղցր բանիւք յորդորելոյ զնոսա, յետ այնչափ բարիս առատաձեռնելոյ առ նոսա, նուիրեաց վասն նոցա և զկեանս անձին իւրոյ՝ զպատուականագոյնն քան զկեանս ամենայն։ Այլ աղէ ի խաչին իսկ տեսէք զնա... Մինչչև աւանդեալ զոգին՝ յաղօթս կայ անսահման զթասիրութեամբ վասն իւրոցն, մատուցանելով Հօր իւրում ի քաւութիւն մեղաց նոցին զայն արիւն՝ զոր ձեռք նոցին աստուածասպանք հեղուին։

Յաղագս այսորիկ և երանելի առաքեալն Յովհաննէս զոչէ առ նորս աշխարհ. « Այսուիկ գիտացաք զսէրն « Աստուծոյ, զի նա զանձն իւր եդ վասն մեր. և մեք « վասն եղբարց մերոց պարտիմք դնել զանձինս (49)։ »

Այս հոգի անձնանուէր սիրոյ՝ հնոյն աշխարհի անձանօթ՝ տեսէք յո՛ր ժամանեալ է սահման. այս է յաղթանակ, սոյն և կատարումն Սիրոյ։

ԺԴ

Եւ արդ ասանիկ և այլ իմն տեսարան մեծ և սքանչելի՝ պարզեալ յԱստուծոյ առաջի բանականացս սեռի ի վախճան ժամանակաց, ի վերայ աշխարհիս աւերակաց, յորժամ վարագոյր՝ եթէ օրէն իցէ ասել՝ Աղքատութեանն Խորհրդոյ ի բաց վերասցի, և տեսանիցէք ձերովք իսկ աչօք զոր ինչ սարսափելի և միանգամայն սքանչելի եղ Բարձրեալն յօրէնս անդ Սիրոյն։ Լուարուք. Քրիստոս ինքն է որ ասէն.

« Եւ յորժամ եկեսցէ որդի մարդոյ փառօք իւրովք՝ և
« ամենայն հրեշտակք ընդ նմա, յայնժամ նստցի յաթոռ
« փառաց իւրոց։ Եւ ժողովեսցին առաջի նորա ամե-
« նայն ազգք, և մեկնեսցէ զնոսա ի միմեանց, որպէս
« հովիւ զի մեկնեսցէ զոչիս յայծեաց։ Եւ կացուսցէ
« զոչիսն ընդ աջմէ իւրմէ՝ և զայծիսն ի ձախմէ։

« Յայնժամ ասասցէ թագաւորն ցայնոսիկ որ ընդ
« աջմէն իցեն. եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք
« զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն ի սկզբանէ
« աշխարհի։

« Զի քաղցեայ և ետուք ինձ ուտել, ծարաւեցի և արբու-
« ցիք ինձ, օտար էի և ժողովեցիք զիս, մերկ և զգեցուցիք
« զիս, հիւանդ էի և տեսիք զիս, ի բանտի էի և եկիք առ իս։

« Յայնժամ պատասխանի տացեն նմա արդարքն և
« ասասցեն . Տէր , ե՞րբ տեսաք զքեզ քաղցեալ և կերա-
« կրեցաք , կամ ծարաւի և արբուցաք . ե՞րբ տեսաք
« զքեզ օտար և ժողովեցաք , կամ մերկ և զգեցուցաք . ե՞րբ
« տեսաք զքեզ հիւանդ կամ ի բանտի , և եկաք առ քեզ ։
« Պատասխանի տացէ թագաւորն և ասասցէ ցնոսա .
« ամէն ասեմ ձեզ , որովհետև արարիք միում յեղբարցս
« այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարիք ։

« Յայնժամ ասասցէ և ցայնոսիկ որ ընդ ահեկէն իցեն .
« երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենական , որ
« պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա ։

« Զի ե՛քաղցեայ և ոչ ետուք ինձ ուտել . ծարաւեցի և ոչ
« արբուցիք զիս . օտար էի և ոչ ժողովեցիք զիս , մերկ
« էի և ոչ զգեցուցիք զիս , հիւանդ և ի բանտի՝ և ոչ տեսիք
« զիս ։ Յայնժամ պատասխանի տացեն և նոքա և ասաս-
« ցեն . տէր , ե՞րբ տեսաք զքեզ քաղցեալ կամ ծարաւի
« կամ օտար կամ մերկ կամ հիւանդ կամ ի բանտի , և
« ոչ պաշտեցաք զքեզ ։ Յայնժամ պատասխանի տացէ
« նոցա և ասասցէ . ամէն ասեմ ձեզ , որովհետև ոչ արարէք
« միում ի փոքրկանցս յայսցանէ , և ոչ ինձ արարէք ։

« Եւ երթիցեն նոքա ի տանջանսն յաւիտենականս , և
« արդարքն ի կեանսն յաւիտենականս ։ »

Այս է աւասիկ զոր խորհուրդ աղքատութեան կոչեցաք ։
Հապա ածջիր զմտաւ զայն որ ծածկեալ ասէ զանձն իւր
ի միում ի փոքրկանցդ յայդցանէ եղբարց , զթացիր ի
Քրիստոս՝ որ թաղուցեալ կայ ի չքաւորն ագիրասարկու

առ քեզ, և պատկառեաց ի մեծվայելչութենէ անտի Աստուծոյ որ ընդ զրգռեկաւն ծածկի։ Մի՛ երբէք մոռաս ցիս զի խնդիրն դատաստանի ի մեծի աւուր հատուցման գործոց յայնմ է բովանդակ, յայնմ միայն՝ եթէ Զի՛ա՛ր կատարեցեր զօրէնս ողորմածութեան առ եղբարս քո։

Բայց անաւասիկ և աստուածային փոխարէն սիրոյն պատուիրանի։ Օրէնսդիրքն մարդկայինք փոխարէնս օրինաց իւրեանց զպատժոցն ևեթ կշռեն սպառնալիս. իսկ աստանօր ոչ այնպէս, այլ ըստ նմին համեմատութեան տեսանեմք և զվարձուցն հատուցումն առընթեր պատուհասին. յաշխարհական ուրախութիւն պատուիրանապահացն, նոյնպէս և պատուիրանազանցիցն տանջանք յաշխարհական։ Այսպէս կամեցաւ զերազոյնն հաւասարութիւն. այսպէս վէճ ետ տիրականն արդարութիւն։

Սարսեցարուք ուրեմն լուծիչքդ աստուածայնոյ պատուիրանին. այլ ողորմածքդ ցնծացէք և ուրախ լերուք։

ԺԵ

Այսոքիկ են ահա, Եղբարք սիրեցեալք, բազմաբեղուն արդասիք, և պտուղք կենդանութեան, մեծութիւնք, վսեմութիւնք, պերճութիւնք, կամ թէ որպէս երանելին Պօղոս ասէ՝ լայնութիւն և երկայնութիւն, բարձրութիւն և խորութիւն, ամենայն չափք աստուածայինք քրիստոնէական Սիրոյն։

Այս ուրեմն Սէրն քրիստոնէական, իբրև առաքինու-

թիւն որոյ կէտ նպատակին է Աստուած և ընկերն միան-
գամայն, յայտ առնէ ըստ ծայրագունին իւրում նշանակու-
թեան զմարգասիրութիւն, զեղբայրսիրութիւն, զողոր-
մածութիւն, այլ և աւելի ինչ ևս յոյժ քան զայս ամենայն.
զի յայտ առնէ սիրել զընկերն իբրև զանձն, և ըստ
եղանակս ինչ՝ առաւել իսկ քան զանձն, յԱստուած և
վասն Աստուծոյ. այս ինքն է սէր մարդկային աստուա-
ծարեալ, սէր դերբնական, սէր ընդհանրական, սէր
գորովալից և արդիւնական։ Քանզի Սէրն Քրիստոսի
յինքն բովանդակեալ ունի ոչ միայն զներբին և զիսկական
զգացմունս առաքինութեանցս այսոցիկ բարոյականաց՝
ի վեր քան զբնութիւնս ազնուացելոց, այլ և զամենայն
զյայտնութիւնս նոցին արտաքինս, զամենայն զգործս
որ ասպացոյցք են նոցին շօշափելիք, այն իսկ են մխի-
թարութիւն տառապանաց հոգւոյ և մարմնոյ, ազգի
ազգի բարեգործութիւնք՝ ողորմածութեան յայտարարք,
նպաստաւորութիւնք զանազանք, պաշտպանութիւն
կարօտելոց, ճրիատուր հրահանգք, խրատք պիտանիք,
սփոփանք ի վիշտս, քաջալերութիւնք ի յուսահատու-
թիւնս, աղդարարութիւն եղբայրական, շինութիւն օ-
րինակի բարւոյ, համբերութիւն, զթութիւն, հեզութիւն,
քաղցրութիւն խօսից և գնացից, ներողամտութիւն ան-
թերութիւնս այլոց, թոյլատուութիւն անձանց և կարծեաց,
երկիւղ յամօթ առնելոյ և վշտացուցանելոյ զընկերս,
անիրաւութեանց մոռացումն, խաղաղութեան և միա-
բանութեան սէր, հրաժեշտ յանձնական օգտից, յօգուտ

այլոց տալ զանձին զհաճոյս, զինչս և զկեանս անգամ՝ ի հանգամանս ինչ կենցաղոյս յորս կամք իցեն Տեառն դնել զմարդ առընթեր նմանեաց նորին։

Այս է աւասիկ Սէրն, զարձեալ ասեմ. սա է զեռն կենդանարար որ արբուցանէ զերկիր՝ զի պտղաբեր լիցի Աստուծոյ, և պտղոցն սերմանք՝ ի Քրիստոսէ արկեալ ի սիրտ նորա, զանձք առաքինութեան, մեծութեան բարուց, զօրութեան և յաջողութեան, զորս կամեցաւ Աստուած յօգուտ առն առն և հասարակաց՝ անանձնատս առնել ի պահպանութենէ պատուիրանին եղբայրսիրութեան։

Ժ.

Առաքեալն Սիրոյ աւետարանիչն Յովհաննէս, որպէս ի պատմութիւնս ունիմք աւանդեալ, լի արդեամբք վաստակոց հասեալ ի խոր ծերութիւն, տայր տանել զանձն իւր ի ժողովս հաւատացելոց. և զի ոչ ևս կարէր ճառս երկայնաձիգս արկանել՝ շատ համարէր կրկնել և երեքկնել զորովագութ սիրով զբանն զայն Փրկչին՝ եթէ «Որդեակք իմ, սիրեսջիք զմիմեանս։»

Զանձրացեալ իմն աշակերտացն ի լուր հանապազորդ կրկնութեան նոցին բանից՝ հարցին ցնա յաւուր միում և ասեն. «Վարդապետ, զի՞ է զի զնոյն բան ասես հանապազ։» Եւ պատասխանի երանելին, արդարև սիրոյն աշակերտ. «անդի պատուէր Տեառն է որդեակք, և եթէ այս միայն իցէ՝ բաւական է (50)։»

Այո, արդարև բաւական է այս և մարդոյ սոսկականի, և մարդկեղէն ընկերութեան, և ի կենցաղոյս պէտս, և սակս հանդերձեալ կենաց. զի սա է կատարումն, սա երանութիւն, և սոյն լրումն վախճանի մարդոյ։

Ո՛հ, եթէ ամենք թիւսպայորդք որ ի բազում ժամանակաց հետէ մրրիկս աշխարհի սպառնան՝ չպատառէին երբէք երբէք ի փայլատականց աստուածայնոյ սիրոյն. եթէ Աստուած՝ մշանջենաւորն վառարան այնր սիրոյ՝ չպահպանէր զայն խնամով ի վերայ երկրի ի ծոց իւրոյ Եկեղեցւոյն, և եթէ չիջանէր խաղինոյր այն ի հոգիս, յիրաւի էր մեզ յուսահատ լինել ի փրկութենէ մարդկայինս ազգի։ Սակայն եկեսցէ ժամանակ, և մերձ իսկ է, որպէս թարախամիտ յուսով ակն ունիմք, զի ծանուցեալ մարդկան զվատորումն իւրեանց, և տեսեալ զի անզօր են հնարք քաղաքականութեան իւրեանց ի հաստատութիւն ընկերական բարեկարգութեան, մօտագոյնս մերձեսցին առ Քրիստոս՝ ընդունել ի նմանէ զկենդանութիւն զոր երեր նա յաշխարհս և մանաւորէ աշակերտաց իւրոց ի ձեռն Սիրոյ։ Յայնժամ ապա սքանչացին ամենեքեան ընդ չքնաղն տեսարան զոր քրիստոսականս կրօնք տացեն աշխարհի, հիասցին ընդ մի միայն ընկերութիւն միաբանեալ ի մի և եթ դաւանութիւն հաւատոյ, ի նոյն սէր եղբայրական, ի նոյն սիրտ և ի նոյն հոգի, զերկնից բերելով աստէն յաշխարհիս պատկեր։

Այո՛, սիրեցեալ Եղբարք, ունիմք Մեք զայս յոյս բերկրական, և օր քան զօր առելով առէ սա ի սիրտս մեր։ Այլ և յոչ կամաց արտաքս անտի վազեալ ի մեծ հրճուանքս ուրախութեան փոխի յորժամ տեսանեմք որչափ ինչ գործ գործի վասն սիրոյն Աստուծոյ և ընկերին ի մեծի յայսմ քաղաքիս՝ յոր պարծի Գաղղիա, որ (ըստ այլոցն իսկ ազգաց ասելոյ) քաղաքամայր է բարգաւաճութեան աշխարհի՝ և գիտութեանց և դպրութեանցն փառօք, և բնակչացն քաղցրաբարոյ բարեկարգութեամբ, և զոր մարթի մեծաւ իրաւամբ քաղաքամայր սիրոյ և ողորմութեան կոչ անուանել՝ սակս անհամար բազմութեան օթևանացն գթութեան, աւետարանական բարեգործութեան, և բիւրազգի առաքինութեանց։

Ընթացարուք ընդ աշխարհ ամենայն, ի հիւսիսոյ մինչև ի հարաւ, և ի մտից մինչև ի յելս արևու, և ցուցէք մեզ՝ թէ կարող իցէք՝ տեղի մի յորում աւելին հոգութիւն այսքանեաւ առատութեամբ և այսպիսեօք հարստարանաւ յեղանակօք սփոփեցի ի վերայ տառապանաց մարդկան։ Ոչ ուրեք բաշխին տուրք առատագոյնք և շատագոյնք քան աստէն. և մանաւանդ ոչ ուրեք լաւագոյնք, այս ինքն ոչ առաւելագոյն ուրախութեամբ տուեալք և ոչ փափկագոյն ընտրողութեամբ։ Այո՛, Եղբարք սիրեցեալք, յեղանակն իսկ առնելոյ զսէր և զողորմութիւն,

որպէս և առաքեալն վկայէ, մեծապէս ազգու գործէ զայն և արդիւնական (54) ։ Աստանօր քան այլ ամենայն ուրեք՝ անհրաժեշտն անհաւասարութիւն ընչից և պայմանի կենաց՝ թուի անհետ լինել, կամ թէ դէթ հաւասարութիւն ինչ առնու ըստ կարի՝ յանշահասէր և ի զուարթառատ բաշխմանէ տրոց, ի զթասիրական հնարից, ի սիրալիր առատաբարանաց, ի զորովական մտաղիւրութենէ, յամենայնէ որ զինաթափ առնէ զնախանձ, և ի համբոյր հաշտութեան ածէ զմարդիկ ։

Փարի՛զ, քաղաք հրաշալեաց, քաղաքամայրդ անզուգական. որ ինչ ինձ զարմանալին է ի քեզ՝ ոչ ապարանքդ են ոսկէզօծք, յորս մեծութիւնք մարդկեղէնք զարուց ի դարս զմիմեանս յաջորդելով՝ հանդերձ յիշատակօքն իւրեանց և զհետս մեծվայելչութեանցն թողին. ոչ թանգարանքդ այդքիկ յորս խնամօք արանց իմաստնոց հանդիսացեալ սփոին առաջի ակնկատոյց տեսողաց՝ ասէն արդիւնք զանազանեալ ցեղապետութեանց ընութեան, և անդանօր հրաշակերտք արուեստից և հարստութեանց. ոչ կոթողն այն որ յերկնաբերձ ծայրին բարձեալ ունի զինքնակալն մեծ՝ օձապատոյտ կամարաւն պղնձեաւ յորում քանդակեալ կան ի հիացումն ապագայ զարուց պատերազմունք, յաղթութիւնք և աշխարհակալութիւնք, որոք լի և պատարուն է պատմութիւն վարուց առնն, մին ի հրաշավէպ պատմութեանց աշխարհի. և ոչ կամարն այն յաղթութեան կանգնեալ ի փառս մեծի բանակին, քան զամենայն

զմանգունատիպ յիշատակս վաղեմիս դերազանց, որոյ պսակն լի պատերազմական մրցանակօք՝ թուի լինն ի բացուստ ընդ աստեղազարդն երկինս խառնեալ։

Որ ինչ մեզ զարմանալին է քան զամենայն, որ ինչ հիացուցանէ զմեզ և յատիչտակէ զմիտս մեր, տեսարանն է՝ դարձեալ ասեմ՝ այնր զործունեայ և անխոնջ Միրոյ որ բազմանալով բազմանայ ընդ ամենայն կողմանս մեծի քաղաքիս, հասանել յօգնութիւն կարօտելոց, ախտաժետաց, ծերոց, տկարաց, որբոց, տղիտաց, մոլորելոց, լքելոց, կուրաց, խլից և համերց, մոռթա-փից, բանտարկելոց, դատապարտելոց, և առ հասարակ ամենեցուն որ մատնեալ իցեն յաղէտս ախտից կամ թշուառութեան. կառուցանելովյանուն Տեառն Յիսուսի բնակարանս հոյակապս ի սէտս չքաւոր և վշտալիր մարդկան, հիմնելով հիւանդանոցս և աղքատանոցս, հաստատելով զանձանակս բարերարութեան, բանալով վայրս բաշխելոյ զողորմութիւն, կանգնելով տունս ապաստանի, զպրոցս օժտելով, մանկավարժոցս բա-նալով, մուրս կազմելով, և ի բազմապատիկ օթևանս յայսոսիկ կանգնեալս յիւրմէ աստուածպաշտութենէն՝ ժողովելով զամենայն տկարութիւնս հոգեկանս և մար-մնականս. ոչ ի հրապարակել առաջի աչաց իմաստնոց իբրու հետաքննութեան և հրահանգաց ինչ հարակս, այլ ի խնամել զնոսին, ի մխիթարել, և ի բժշկել՝ եթէ իցէ հնար, ի զորձ արկանելով զամենայն զինարս արուեստին, և ծախելով արծաթ և հոգս բազում։

Այսոքիկ են անա ապարանք և թանգարանք Կրօնից, որ առընթեր իւրոյն տառաբաց այնպիսեաւ փայլեն պայծառութեամբ՝ ղի ամենայն փառք երկրի աղօտք են առ նովաւ ենեմք։

Բա՛ԷՏ, քանի՛ բաղուկք արիականք, քանի՛ սիրտք աղնուականք, քանի՛ բարեսաշտիկ ընկերակցութիւնք են որովք ի զարման այս ամենայն չարեաց նահատակի Սէրն։ Թող զհանրականն ընկերակցութիւնս որ յամենայն ի թաղս Փարիզու սփռեալ՝ խոյզ և խնդիր առնեն թշուառութեան՝ յո՛ր կերպարանս և զտանիցի, ձայն տալով առ մէն մի յաղետից կենցաղոյս առ ի բառնալոյ կամ նուազելոյ, և կամ առ ի թողելոյ իմն զնոսին աստուածայնովքն իւրեանց մխիթարութեամբք։ Են են և ի ժողովրդապետութիւնս իւրաքանչիւր առանձինն գործք ողորմութեան. և քահանայք նոցին, որք առ հասարակ թելադիրք և կենսատուք են ամենայն արդեանց սիրոյ և իրրու կեղրանք նոցին և մշտաբորբոք վառարանք, հասանեն փութանակի յօգնութիւն կարեորագոյն պիտոյից աղքատաց և տառապելոց յայսմ մասին մերոյս հաւատարիմ հօտի։ Յանհնարիցն է մեզ ի թիւ արկանել ստանօր մի ըստ միոջէ զընկերակցութիւնսն զայնոսիկ և զողորմութեան գործս. և որ տպագրի զարդիս մերովս հրամանաւ ցուցակն ևեթ նոցին՝ հանդերձ կանոնացն իւրաքանչիւր պատմութեամբ, թէպէտ և փոքր քանակաւ կազմեսցէ մատեան, այլ եղիցի մի ի զեղեցկագունիցն արձանաց յիշատակի կանգնելոց ի փառս Սիրոյն Քրիստոսի։

Եւ զկա՛ր մարթասցուք ասել ձեզ, Եղբարք, զբաղմութիւն արանց և կանանց յամենայն կարգէ և յամենայն հասակէ որ գործոցս ողորմութեան լինին գործակիցք։ Եւ նախ առաջին Հովիւքն հոգւոյ, որ յետ հոգեորական հացիւ զտառապեալ խաչինան կերակրելոյ՝ բաշխեն ի նոսա երբ կարող իցեն և զմարմնոցն կերակուր։ Եւ ապա Քահանայիցն սրբոյ երասաք՝ նոյնպէս տնօրէնք Սիրոյն Քրիստոսի ի սպաս պաշտաման խրաքանչիւր եկեղեցեաց և հիւանդանոցաց և բանտից. ապա և այն զունդք նուիրականք որ մեծապէս օժանդակ լինին մերումս պաշտաման, զզանազան կարգս ասեմ կանոնաւոր քահանայից հաստատելոյ ի մերում վիճակիս. և ապա խոնարհագոյնն դաս՝ բայց սիրելին ժողովրդոց և արդեամբք վաստակոցն զարմանալի, Եղբարքն ուսուցիչք վարդապետութեան հաւատոյ։

Աւընթեր արիագունդ նահատակաց այսոցիկ Սիրոյ կարդեալ կազմեալ կան կուսանք՝ առանձինն նուիրեալք ի նորին պաշտօն. Դստերքն ողորմութեան սրբոյն Վիկենտեայ Պաւլայեցւոյ, Աւգոստինեանք հիւանդանոցին, Հիւրընկալքն սրբոյն Թովմայի Վիլնովացւոյ, Նեւերեան Դստերք զթութեան, Քորք երանուհւոյ Կուսին, Քորք սրբոյն Անդրէի, Քորք Յովսեփայ աստուածահօրն, Քորք Քաջի հովուին սուրբ Աստուածածնի եկեղեցւոյն, և այլք բազումք զորոց ոչ բաւեմք յիշատակել զանուանսն, և որք ըստ օրինակի ժրաջան մեղուաց իբրու ընդ հակառակս իրեարաց եռանդագին վաստակեն ի

միայնանոցս իւրեանց՝ պատրաստել ի պէտս վշտակիր անդամոցն Քրիստոսի զմեղր երկնայնոցն քաղցրութեանց, և ի բուժումն վիրաց նոցին սպեղանիս իւղոց անուշից։

Բայց ահաւասիկ առեալ ընդարձակի տեսարանն մեծ, և ես քան զես սխրալի հանդիսանայ։ Անդստին իսկ յաղմկաց աշխարհի ընթացեալ մտանեն ինքերքոյ դրօշուցն Քրիստոսի՝ բորբոքեալք Սիրոյն եռանդեամբ՝ զունդք զունդք անհամարք ընչաւէտ քրիստոնէից, ընտիր ընտիր երիտասարդաց, պարկեշտ արուեստագիտաց, որ և յիւրեանց ստացուածոցն մասն մեծ խառնելով՝ սիրեն առ աղքատս զամենայն զմխիթարութիւն աստուածային և մարդկային. և սոքա են բազմաթիւ խորհրդակցութիւնքն Վիկենտեայ Պալայեցւոյ, և Ընկերակցութիւնք Փրանկիսկոսի Հռեղեան, Փրանկիսկոսի Բասերեան, պաշտպանութեան սրբոյն Նիկողայոսի, Բարեկամաց մանկութեան, Բարեկամաց համբակաց արուեստից, և այլ ևս բազումք զորովք հարկ է լռութեամբ անցանել։

Սակայն ո՞վ ոք կարող իցէ մանաւանդ ըստ արժանւոյն դրուատել զնախանձարեալաշտութեան տիկնայցն քրիստոնէից, որ քաջ գիտելով միաբանել զպարտս ընկերական և ընտանեկան կենցաղոյ ընդ զորձունեայ բարերարութեան, զեղեցիկ իմն պանծանօք պարծին կոչել զանձինս Տիկնայս Գթասիրութեան կամ Ողորմութեան, Մայրութեան, Բանտից, Պաշտպանութեան, սրբուհւոյն Աննայի, սրբուհւոյն Գենովափեայ, կամ թէ հիւանդաց կա-

բուսելոց, հիւանդանոցաց, մանկավարժոցաց, մսրաց, արուարձանեայց, և արիական իմն քաջութեամբ Մուրացիկք լինին ի պէտս տառապելոց. մուրացիկք սրդարն վեհմականք Քրիստոսի, որք ձեռս ի մոյր կարկառեն սակս ամենայն ողորմածութեանց զորս յիշատակեցաք և զորս ոչ յիշեմք յանուանէ. բայց չկարեմք անյիշատակս թողուլ ընդ նոսին զեկեղեցական վարժարանս փոքունս, զկարմեզականաց վանս, և զհիւրանոցն Մարիամու Թերեզիայ:

Այս է աւասիկ մեծն այն բանակ Քրիստոսի, որոյ վասն հայցեմք մեք ի վերուստ կամարս յաղթութեան քաջ ի բաց զերապանցս մեծութեամբ և փառօք քան զերկրաւորսն առ հասարակ, յորժամ մարգարէական աչօք հաւատոյ նկատեալ զմեծ զօրագլուխ նորին ի գրունս յաւիտենից եկեալ հասեալ իւրովքն հանդերձ, յետ տիրապետելոյն աշխարհիս ի ձեռն Սիրոյ և զթութեան՝ զոչեսցուք ընդ Սաղմոսերգուին զյաղթական նուագն. « Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր, « և մտցէ թագաւոր փառաց։ » — Եւ հրեշտակքն հարցանեն. « Ո՞վ է սա թագաւոր փառաց։ » Եւ մեք ասամք պատասխանի. « Տէր զօրութեանց. սա ինքն է թագաւոր փառաց » միշտ յաղթող ի մրցմունս սիրոյ ընդդէմ անձնասէր մտաց, և որ զթշնամիս իւր նեղան առնէ շնորհօք և գործովք մարդասիրութեան (52):

Այլ մինչչև հասեալ իցէք ի յաղթականն այն մուտս ի քաղաքն յաւիտենից, ասատէն իսկ օրհնեսցէ Աստուած

զամենեսեան զձեզ որ այդքանեաւ արիութեամբ և անխոնջ տեւականութեամբ անձնատուրք և անձնանուէրք զտանիք ի վաստակս տարժանելիս, և ի հանապարդարդ աշխատութիւնս Սիրոյ։ Սիրտ ձեր ի յուսով և սիրով՝ զտանէ ի նոսին սփոփանս անճառելիս, ընդ այն չիք երկրայութիւն. սակայն առընթեր ներքնոցդ այդոցիկ հրճուանաց սրտի՝ զտանին բազում անգամ և զդուանք և արհամարհանք ոչ սակաւք, և ոչ սակաւ ճանձրութիւնք և ապերախտութիւնք։ Ո՜հ, ոչ ծանկի այն յԱստուծոյ. հայեցարուք ի հատուցումն փոխարինին և մխիթարեցարուք յանձինս։

Օրհնեսցէ Աստուած զԲրիստոնեայդ զեռահասակս, որ փախուցեալք ի տեսարանաց և ի հեշտութեանց աշխարհի, երանութիւն իմն համարիք անձանց՝ յայց առ ազքատս ելանել, ժողովել զմանկունս ընկեցիկս, հրահանգել զոմանս ի նոցանէ ի կատարումն պարտուց, կրթել և զայլս ի համբակութեան արուեստից, զոմանց զվարձս բնակութեանցն հատուցանել և զայլոց զպարտս, սուրբ առնել զամուսնութիւնսն ապօրինաւորս, մխիթարել զազգատոհմս տնանկացեալս, ձեռն օգնութեան մատուցանել առ կարօտեալս, և սրբել զարտասուս ամենայն թշուառացելոց։

Օրհնեսցէ և զտիկնայդ քրիստոսասէրս, որ զյաւելուածս ձերոց հոխութեանց և ժամանակի, ևս և զմայրենի զորովոյ, ծախէք ի պահպանութիւն առաքինութեան, կամ ի զարման և ի նորոգումն անմեղութեան, և խնամս

սրտառուչս տառատաձեռնէք առ այնոսիկ զորս դատեաս և որպեզիրս և քորս ի Քրիստոս անուանէք, ի տունս հովանաւորութեան և կամ յարուեստանոցս, ի քաղաքամիջի և յարուարձանեայս։ Սիրոյն նահատակք առաքինիք, անուանք բաղմաց առ ի ձէնջ հանդերձ յիշատակաւ արդեանցն ձերոց վրիպեցին անկան արդեօք ի յուշոյ մերմէ. սակայն չիք և ոչ մի ոք որ մոռացեալ իցէ առաջի Աստուծոյ, և ոչ մի ինչ որ մոռացեալ իցէ ի սիրտ ձերոյս Դիտապետի. օրհնեալք եղերուք ամենեքեան առ հասարակ, օրհնեալ և ընտանիք ձեր, օրհնեալ և մանկունք ձեր, օրհնեալ և ամենայն որ սիրելին է սրտից ձերոց։

Ո՛հ, երանի՛ է ձերումս Առաջնորդի որում շնորհեցաւ ղեղուլ այսպէս զսիրտ իւր առ ձեզ՝ հանդերձ խանդաղատկաթ օրհնութեամբք։ Երանի՛ նմա որ այդպիսում վիճակեցաւ պանծալի հօտիդ։ Անբաւ է սատարութիւնն զոր առ ի ձէնջ ընդունի սա ի լրումն իւրոյ պաշտաման. և զուք ձերովդ անձնանուէր սպասաւորութեամբ թեթեւաբեռն գործէք զծանրութիւն հոգոյ սորա, և զմասն ինչ սոսկալի պատասխանատուութեան սորա բառնայք ի սմանէ։ Շնորհ յոյժ ունի սա ձեզ առաջի Աստուծոյ և Քրիստոսի Յիսուսի. և իբրև ի փոխարէն իւրոցն առ ձեզ պարտեաց՝ ահա խոստանայ կրկին ևս յաճախել վասն ձեր զաղօթս իւր և զսէր առաջի սեղանոյ անմահ Պատարագին։

Եւ ի վախճան բանիցս այսոցիկ քաղցր է մեզ աշխար-

հաքարող առնել զներքինս զայս և զաներկմիտ հաւանութիւն մտաց մերոց, զի թէ երբէք սպառնալիք աստուածասաստ բարկութեան իցեն ի վերայ Փարիզ քաղաքի, որպէս երբեմն ի վերայ հինգ քաղաքացն մեղապարտից՝ սակս սոդոմին եղերանցն որ ի նոսա գործէին, արդարև՝ Եղբարք սիրեցեալք, Աէրն ձեր հզօրագոյն քան զամբարշտութիւն՝ ի բաց դարձուսցէ զվրէժխնդիրն չանթիս, և խնայեսցէ Աստուած ի քաղաքս յայս ի մեծ՝ յաղագս այնքանեաց ողորմութեանց զորս առնէք դուք ի սմա։ Վասն որոյ, մխիթարիչդ Փարիզոյ ի հանապազորդ վիշտս իւր՝ միանգամայն և փրկարարք էք սորա յանդիման արդարութեանն Աստուծոյ։ Այո, յետ Աստուծոյ, ո՛չ Հաւատացեալ ժողովուրդք, զուք էք որ կեանս տայք կիսակենդան ընկերութեան մարդկան՝ յետ զնոյն կեանս ծծելոյ յաստուածեղէն Սիրոյն վասն ձեր և ի սնունդ ոգւոց ձերոց։

Ո՛վ Աէր, ո՛վ աստուածսիրութիւն և եղբայրսիրութիւն որ ի սրտէն Յիսուսի իբրև յանսպառ աղբերէ գետահեղեալս անդադար, զու ինքն ես կենդանութիւն հոգւոյ և մարդկայինս ազգի։ Աբի եկ ի սիրտս մեր և ջնջեա առ ի մէնջ և զնեաս անձնահաճ և անյաղուրդ կրից. ցրուեալ փարատեա ի մէնջ զամենայն պատճառս հերձուածոց և բաժանմանց զկործանիչս ժողովրդոց։ Ո՛վ աստուածայինդ Աէր, միաբանեա զամենայն մարդիկ ի մի միայն ազգաստամ եղբարց. մի՛ ևս այլ եղիցի նոցա մերժել զմիմեանս և կամ չափ և սահմանս կարդել սիրոյ իրեանց

ատ իրեարս. թող ամենայն ոք, զի միանգամայն ասացից, սատար լիցի Իւրովսանն ի տիեզերականն դաշնակաւորութիւն՝ յօգուտ հասարակաց զանձն նուիրելով. քանզի ի սիրտ զոր դուն ընդարձակես՝ ամենեցուն են օթևանք, սոսկականաց և աղգատոհմից, քաղաքի և հայրենեաց, աշխարհի և համօրէն տիեզերաց։

Եւ ընթերցցի Պատուիրանագիրս այս յեկեղեցիս և ի մատրունս մերոյս վիճակի, ի ժողովրդապետականսն և յառանձնականս, ի կիւրակէի որ յետ ընդունելութեան սորին։

Տուաւ ի Փարիզ մերովս ստորագրաւ և վաւերական կնքով, և ձեռնագրութեամբ հանրական Աստենագրի արքեպիսկոպոսարանիս մերոյ, ի 20 ապրիլի յամի Տեառն 1852։

Մ. ԴՈՄԻՆԻԿՈՍ ԱԻԳՈՍՏՈՍ
Արքեպիսկոպոս Փարիզ քաղաքի.
Ի հրամանէ Աստուածապատիւ Արքեպիսկոպոսին
ԲՈՐԱՆ, Կանոն. պատուոյ,
Աստենագր. հանր։

Տ. Կ.

Թարգմանեաց ի մերս

Հ. ԳԱԲՐԻԷԼ Վ. ՍՅՎԱՋՈՎՍՔԻ

ՄԽԻԹԱՐԵԱՆ

Տեսուչ ուսմանց ի Մոսքուանան Վարժարանին։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

---

[1] Մատթ. Զ, 33։

[2] «Քանզի արդարութիւն քան զամենայն առաքինութիւնսն բարոյականս գերազոյն է.» Ս. Թովմ։

[3] «Որ ամենեցուն զիւրն հատուցանէ, յայլոցն ակն ոչ դնէ, զանձին շահու զանց առնէ զի հասարակաց հաւասարութեանն զգուշասցի.» Ս. Ամբրոս. Ա, Յզ. Պատշ։

[4] «Քանզի նոյն ինքն արմատ է հասարակաց բովանդակ կարգի մարդկեղէն ընկերութեան.» Ս. Թովմ։

[5] «Պայծառազոյն յառաքինութիւնս փայլէ արդարութիւն, և ոչ զիշերավարն և ոչ արուսեակ աքանչելիք են իրրև զնա.» Ի Բարոյ. Բ։

[6] «Յարդարութեան է առաքինութեանն լուսափայլ պայծառութիւն, յորմէ և արք բարիք առնուն զանուանակոչութիւն.» Յզ. Սահմ. բար. և չար։

[7] «Քանզի պատճառք սիրոյ ընկերին ինքն իսկ Աստուած է, սէրն ոչ առ Աստուած միայն՝ այլ և առ ընկերն ձգեալ հասանէ.» Ս. Թովմ։

[8] «Աստուած սէր է.» Ա. Յովհ. Դ, 16։

[9] «Զգեցի զնոսա կապանօք սիրոյ իմոյ.» Ովս. ԺԱ, 4։

[10] Մատթ. ԺԳ, 36—40։

[11] Ս. Թովմ. մասն Բ, հատ. Բ։

[12] Յովհ. ԺԴ, 1։

[13] Ս. Թովմ. մասն Բ, հատ. Բ։

[14] Ա. Յովհ. Դ, 7։

[15] Անդ, 8։

[16] Ա. Յովհ. Դ, 12։

[17] Անդ, 20։

[18] Անդ, 21։

[19] Ա. Յովհ. Ե, 1, 2, 3։

[20] Խորհրդած. հատուած Թ, Յիսուս Քրիստոս։

[21] Տես և զերկրորդ թուղթն առ Մակեդոնիոս։

[22] Ս. Թովմ. մատն Գ, խնդ. Խէ։

[23] Յղ. յաւել. գիտ. գիրք Է։

[24] Կողոս. Գ, 14։

[25] Եսայ. ԺԴ, 14։

[26] Ծննդ. Բ։

[27] Մատթ. Բ, 44, 45։

[28] Զի charité ի զաղղիական բարբառ, և charitas ի լատինն՝ արմատ ունին զյունական ճայնքս χάρις, որ է շնորհ, սէր, ողորմութիւն, և χαρὰ, բերկրութիւն, խնդութիւն։

[29] Շաթոպրիան, Ոգի Քրիստոնէութեան, գիրք Բ, գլ. Գ։

[29*] « Ընկերի անուամբն, ասէ սուրբն Օգոստինոս, ոչ « միայն զաշնոսիկ իմանայ աւետարանն որ արենակցու- « թեան զօրիս կցորդք մեզ իցեն, այլ և զամենեսեան առ « հասարակ ընդ որս հաղորդութիւն ունիցիմք բնութեան, « օրինաց ծննդեան և պարգևի բանականութեան որ ի մի « լծորդէ զմարդիկ ի նմին ընկերակցութեան։ Այս իսկ « է զոր հշմարտութեանն լոյս ի հնթանոսութեան ժամա- « նակն ևս ծագեալ ի հանճարն չքնաղագիտաց, և

« կատակերգակ քերթողին ծանոյց, որ ծերունիս երկուս
« հանեալ ի տեսարան զրուցակիցս՝ միումն ասել տայ.
« Եւ ունիցի՞ս զու այնքան պարապ ի քոյոցդ զբաղմանց
« զի և զայլոցն իրս հոգայցես՝ որ չիցեն քեզ անկ. » և
« միւսումն առնէ զայս տալ պատասխանի. « Մարդ եմ,
« և ոչ ինչ մարդկեղէն յինէն օտար համարիմ». ընդ որ
« ծափ զծափի հարեալ զրուատեցին միաբան բազմա-
« կանքն առ հասարակ։ Սմին իրի, թէպէտ և էին և անդ
« արք յոլովք ազէտք մտօք կամ ապականեալք սրտիւք,
« սակայն ոչ էր և ոչ մի ոք որ թագուն ազգմամբն տպա-
« տորելով ի խորս ընութեան չիմանայր՝ թէ քանզի մարդ
« է, ոչ կարէ չհամարել իւր ընկեր և զայլ ամենայն
« մարդ » Ս. Օգոստ. Թուղթ առ Մակեդոնիոս։

[30] Ցղ Սահմ. բարոյ և չարի, գիրք Ե։

[31] Մատթ. Ե, 44—48։

[32] Ոմանք ի մատենագրաց բանաւորականքն անուանեալոց՝ ոչ շատ համարեալ զհրապուրանաց բանս, համարձակեցան ամբաստան լինել զքրիստոսական կրօնից՝ որպէս թէ զեղբայրսիրութեան խրատսն յայլոց ի վաղեմի վարդապետութեանց իցէ առեալ։ — Զայս ասացեալ քաջ ի Դիտապետիս՝ հերքել առնու զրանս այնպիսեացն հզօր փաստիւք ի ծանօթութիւնս ընդարձին. այլ մեք ոչ յոյժ կարևոր մերոցն համարելով զինդիրսն, առ տեղեաւս դանց արարաք թարգմանել։

[33] Ա. Յովհ. Դ, 8 և 16։

[34] Բ Յովհ. ԺԳ, 16։

[35] Անդ, Գ, 9, 10։

[36] Յովհ. Բ, 2, և ի Թուղթսն Պօղոսի սաէպ։

[37] Յովհ. Ա, 14։

[38] Մատթ. Ա, և Ղուկ. Գ, 23։

[39] Յովհ. Ա, 12։

[40] Բ Պետր. Ա, 4։

[41] Յովհ. Ա, 14։

[42] Ա. Յովհ. Գ, 1։

[43] Ա. Յովհ. Գ, 17։

[44] Ս. Թովմ։

[45] Գործ. Ա, 1։

[46] Յովհ. ԺԳ, 33, 34։

[47] Յովհ. ԺԵ, 12։

[48] Գրիգ. մեծն, հատ. Ի յԱւետարս։

[49] Յովհ. Գ, 16։

[50] Հերոն. զիրք Գ, ԳԼ. Զ, Մեկն. թղթ. առ Գաղատ։

[51] «Քանզի զտուրս զուարթառատս սիրէ Աստուած.» Բ Կոր. Թ, 7։

[52] Սաղմ. ԻԳ, 7։

Paris. — Imprimerie de SCHILLER aîné, rue du Faubourg-Montmartre, 11.

Paris. — Imprimerie de Schiller aine, rue du Faubourg-Montmartre, 11.

5006